
Co-funded by the European Union

ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ



...առաջին միջդիսցիպլինար հետազոտությունը՝ Հայաստանի մշակութային և ստեղծարար ոլորտներում կայունության պրակտիկաների, բնապահպանական նեթգրամխիճության և քաղաքականության շրջանակների վերաբերյալ...

ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

EUNIC EU National Institutes for Culture

GOETHE INSTITUT

CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ



ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ. ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական զեկույց ՅՈՒՆԻՔ Հայաստանի համար

Արսեն Աբրահամյան
Տիգրան Ամիրյան

Երևան
CSN Lab | ՅՈՒՆԻՔ Հայաստան
2027

ՀՏԴ 316.7:502/504
ԳՄԴ 60.523+20.1
Ա 161

Աբրահամյան Ա., Ամիրյան Տ.
Ա 161 Կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն. հետազոտական զեկույց ՅՈՒՆԻՔ Հայաստանի համար / Ա. Աբրահամյան, Տ. Ամիրյան ; խմբ.՝ Դ. Սիսակյան: — Երևան: Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա ՀԿ, ՅՈՒՆԻՔ Հայաստան, 2027: — 96 էջ:

ISBN 978-9939-1-2378-3

«Կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն»-ը միջոլորտային հետազոտություն է, որն ուսումնասիրում է Հայաստանի մշակութային և ստեղծարար ոլորտում կայունության պրակտիկաները և բնապահպանական հիմնահարցերի ներգրավումը: Այն քարտեզագրում է գոյություն ունեցող մոտեցումները, բացահայտում հիմնական մարտահրավերներն ու հնարավորությունները և առաջարկություններ է ներկայացնում առավել կայուն մշակութային զարգացման համար: Դիտարկելով ինչպես պետական, այնպես էլ անկախ մշակութային հաստատություններն ու նախաձեռնությունները՝ սույն հետազոտությունը վերլուծում է, թե ինչպես են շրջակա միջավայրին վերաբերող թեմաները և գործառնական կայունության միջոցառումները ներկայումս ներառված մշակութային կյանքում, և ինչպես են այդ ջանքերին աջակցում (կամ սահմանափակում) քաղաքականությունն մշակող և որոշումներ կայացնող հաստատությունները: Հիմնվելով հետազոտությունների քարտեզագրման, քաղաքականության և օրենսդրության վերլուծության, ինչպես նաև մշակութային և բնապահպանական նախաձեռնությունների և հաստատությունների փորձագիտական կարծիքների վրա՝ սույն հետազոտությունն առաջարկում է գործնական քայլեր՝ Հայաստանի մշակութային ոլորտում համակարգումը, կարողությունները և երկարաժամկետ կայունությունը ամրապնդելու համար:

Հեղինակներ՝
Արսեն Աբրահամյան
Տիգրան Ամիրյան

Հետազոտական թիմ՝
Արսեն Աբրահամյան
Նանոր Հովհաննիսյան

Խմբագիր՝
Դիանա Սիսակյան

Նկարազարդող՝
Հարություն Թումաղյան

Էջադրող՝
Կլիմ Գրեչկա

Co-funded by the European Union
EUNIC EU National Institutes for Culture
GOETHE INSTITUT
CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

Սույն հրապարակումը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Դրա բովանդակության համար բացառապես պատասխանատու է Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան | CSN Lab-ը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության տեսակետները:

Հեռանկարներ 7

Ամփոփագիր 15

Ներածություն. Մշակութային կայունությունը որպես գործունեություն և քաղաքականություն 23

Հայեցակարգային շրջանակ 24
Հետազոտության նպատակը 24
Մշակույթը՝ էկոլոգիական փոփոխության գործոնդ 26
Մշակույթը կայունության շրջանակներում և քաղաքականությունում 29
Տեղային համատեքստ 31

Մեթոդաբանություն 33

Սահմանափակումներ և հետազոտական բաց 34

Հայաստանի մշակութային ոլորտի կայունությունը 37

Կայունությունը և մշակույթը պրակտիկայում 39
Անկախ մշակութային հաստատությունների և դերակատարների՝ կայունության ուղղված ջանքերը 39

Կայունության ուղղված ջանքերը պետական մշակութային հաստատություններում 47

Համագործակցություն, փոխհատումներ և ինստիտուցիոնալ բացեր 54

Քաղաքականության երկխոսություն. ինչպես են կայունության օրակարգերը մուտք գործում Հայաստան 65

Եզրակացություն 71

Առաջարկություններ 75

Հետգրություն. Դեպի միջոլորտային և միջգիտակարգային մոտեցումներ 87

Հեռանկարներ

Ողջույնի խոսք

Վասիլիս Մարագոս,
Հայաստանում Եվրոպական միության դեսպան

Մեր մոլորակը մեր ընդհանուր տունն է, իսկ կանաչ անցումն առանցքային նշանակություն ունի մեր ընդհանուր ապագայի համար:

Եվրոպական միությունը սիրով ներկայացնում է «Կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն» հետազոտությունը: Այն կարևոր և ճիշտ ժամանակին իրականացրած ներդրում է կայունության շուրջ ընթացող քննարկումներում՝ ցույց տալով, թե մշակութային և ստեղծարար ոլորտներն ինչ առանցքային դեր կարող են ունենալ Հայաստանի կանաչ անցման գործընթացում:

Ամբողջ աշխարհում դեպի առավել կայուն հասարակություններ անցումը ոչ միայն տեխնոլոգիական կամ տնտեսական մարտահրավեր է, այլև մշակութային և հասարակական փոխակերպում: Մշակույթը ձևավորում է այն, թե ինչպես ենք մենք ընկալում մեր շրջակա միջավայրը, ինչպես են համայնքներն արձագանքում փոփոխություններին, և ինչպես են հասարակությունները պատկերացնում առավել կայուն ապագա: Մշակույթը նաև մեր ինքնության առանցքային բաղադրիչներից է: Այս առումով մշակութային ոլորտը մեծ ներուժ ունի նպաստելու բնապահպանական իրազեկվածության բարձրացմանը և հանրային երկխոսության խթանմանը: Մշակույթը կարող է նաև օրինակ ծառայել:

Այս հետազոտությունը ցույց է տալիս հայաստանյան արվեստագետների, մշակութային կազմակերպությունների և հաստատությունների աճող ներգրավվածությունը կայուն գործելակերպերի որդեգրման գործում: Ցուցահանդեսների, փերֆորմանսների, փառատոների և համայնքային նախաձեռնությունների միջոցով մշակութային գործորդները նպաստում են բնապահպանական մարտահրավերների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը՝ օգնելով բարդ հարցերը վերածել հասանելի և իմաստալից փորձառությունների:

Միևնույն ժամանակ հետագա առաջընթացի զգալի ներուժ դեռևս կա: Մշակույթի և բնապահպանական քաղաքականության միջև կապի ամրապնդումը, ինստիտուցիոնալ համակարգման բարելավումը, ինչպես նաև կայունությանն ուղղված մշակութային նախաձեռնությունների տեսանելիության և շարունակականության մեծացումն էական նշանակություն կունենան այս ներուժն ամբողջությամբ իրացնելու համար:

Եվրոպական միությունը շարունակում է հանձնառու լինել Հայաստանի կանաչ անցմանն ու կայուն զարգացմանն աջակցելուն: Միջոլորտային երկխոսության խթանումը և կայունությանն ուղղված ջանքերում մշակույթի՝ որպես ակտիվ գործընկերոջ դերի ճանաչումը, կարևոր քայլեր են առավել ներառական, դիմակայուն և ապագային միտված հասարակությունների կառուցման ճանապարհին:

Վստահ եմ, որ այս հետազոտության մեջ ներկայացված արդյունքներն ու առաջարկությունները կնպաստեն հետագա ջանքերին՝ ապահովելու մշակույթի առանցքային դերը Հայաստանի կայուն ապագայի ձևավորման գործում: Մինչ մենք համատեղ աշխատում ենք ԵՄ-Հայաստան հարաբերություններն իրենց բոլոր ուղղություններով ամրապնդելու, կապակցվածությունը բարելավելու և մարդկանց միջև շփումները խորացնելու ուղղությամբ, մշակույթի ոլորտում կայունության նկատմամբ մեր համատեղ ուշադրությունը շոշափելի արդյունքներ կբերի ինչպես մշակութային դաշտի, այնպես էլ Հայաստանի կայուն ապագայի համար:

Յան-Թագե Քյու լինգ
«ՅՈՒՆԻՔ Հայաստան»-ի նախագահ

Մենք ապրում ենք բարդ ժամանակներում: Ամբողջ աշխարհում կլիմայի փոփոխության և բնապահպանական աղետների հետևանքներն ավելի ու ավելի տեսանելի ու հրատապ են դառնում: Եղանակային ծայրահեղ երևույթներից և կենսաբազմազանության կորստից մինչև բնական պաշարների ու համայնքների վրա աճող ճնշումը՝ կլիմայական և բնապահպանական ճգնաժամերն այլևս հեռավոր խնդիրներ չեն: Դրանք իրողություններ են, որոնք ազդում են մեր հասարակությունների, տնտեսությունների և առօրյա կյանքի վրա:

Միևնույն ժամանակ այս ճգնաժամերը հիշեցնում են մի հիմնարար ճշմարտություն. այդ խնդիրները չեն սահմանափակվում ազգային սահմաններով: Կլիմայի փոփոխությունը համաշխարհային մարտահրավեր է, որը պահանջում է համաշխարհային համագործակցություն: Մենք չենք կարող միայնակ դիմակայել դրան, և դրա հետևանքներն առնչվում են հասարակության բոլոր ոլորտներին:

Սահմաններից անդին համագործակցության այս համոզմունքն ընկած է Եվրոպական միության ազգային մշակութային կազմակերպությունների գլոբալ ցանցի՝ «ՅՈՒՆԻՔ»-ի գործունեության հիմքում: Միավորելով եվրոպական մշակութային ինստիտուտները և

համագործակցելով տեղի գործընկերների հետ՝ «ՅՈՒՆԻՔ»-ն ամբողջ աշխարհում երկխոսության, փոխուսուցման և համագործակցության հնարավորություններ է ստեղծում: Դրա հիմքում այն գաղափարն է, որ մշակույթն ինքնին հատում է սահմանները, իսկ միջազգային մշակութային համագործակցությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու ինչպես մեր ընդհանուր մարտահրավերները, այնպես էլ մեր տարբեր տեսանկյունները:

2024 թվականին հիմնադրվելուց ի վեր «ՅՈՒՆԻՔ Հայաստան»-ը նպաստել է այս փոխանակմանը՝ կապեր ստեղծելով հայաստանյան և եվրոպական մշակութային գործոդների միջև և միաժամանակ անդրադառնալով մեր ընդհանուր ապագան ձևավորող հարցերին: Այս աշխատանքի առաջնահերթություններից մեկը կայունությունն է: Որպես ցանց՝ մենք համոզված ենք, որ մշակույթը կարևոր դեր ունի մեր ժամանակի բնապահպանական մարտահրավերներին արձագանքելու գործում: Մշակույթն ու արվեստը հաղորդակցության յուրահատուկ ձևեր են առաջարկում: Դրանք օգնում են բարդ հարցերը վերածել փորձառությունների, նարատիվների և տեսանկյունների, որոնք այնպես են ներգրավում լսարաններ, ինչպես հաճախ դա չեն հաջողում անել քաղաքականության փաստաթղթերը կամ տեխնիկական զեկույցները: Կանաչ անցման, կենսաբազմազանության կորստի կամ բնապահպանական կայունության շուրջ քննարկումներում գեղարվեստական և մշակութային արտահայտչամիջոցները կարող են մտորումների, երկխոսության և երևակայության համար միջավայր ստեղծել և այդ կերպ մարդկանց հետ հաղորդակցության այլ ուղիներ բացել:

Միևնույն ժամանակ արվեստագետներն ու մշակույթի գործիչները հաճախ առաջիններից են, որոնք նկատում և արձագանքում են ի հայտ եկող հասարակական մարտահրավերներին ու փոխակերպումներին: Իրենց աշխատանքով նրանք ուսումնասիրում են մարդկանց, վայրերի և միջավայրերի փոխհարաբերությունները՝ հաճախ քննադատական հարցեր բարձրացնելով այն մասին, թե ինչպես ենք մենք բնակեցնում և ձևավորում մեզ շրջապատող աշխարհը: Նրանց տեսանկյունները կարող

են օգնել մեզ ոչ միայն հասկանալու բնապահպանական խնդիրները, այլև նախանշելու այն մշակութային և հասարակական փոփոխությունները, որոնք պահանջում են այդ մարտահրավերները:

Սակայն մշակույթն այս գործընթացների լոկ դիտորդը չէ: Հասարակության մյուս բոլոր ոլորտների պես այն անմիջականորեն կրում է կլիմայական և բնապահպանական ճգնաժամերի ազդեցությունը: Մշակութային ժառանգությունը, մշակութային հաստատությունները, գեղարվեստական արտադրությունը և մշակութային ավելի լայն էկոհամակարգը կայունության հետ կապված իրենց մարտահրավերներն ու պարտականություններն ունեն: Ուստի այս իրողությունների ըմբռնումը կարևոր քայլ է առավել դիմակայուն և կայուն մշակութային ոլորտ ձևավորելու ճանապարհին:

Այս մարտահրավերները հատկապես արդիական են Հայաստանի համար: Երկիրն այսօր մշակութային ուշագրավ և դինամիկ աճի շրջան է ապրում: Ժամանակակից գեղարվեստական պրակտիկաները, մշակութային նախաձեռնությունները և միջազգային գործընկերությունները նպաստել են կենսունակ ու բազմազան մշակութային միջավայրի ձևավորմանը: Հայաստանի մշակութային գործորդներն ավելի ու ավելի ակտիվորեն են ներգրավվում միջազգային փոխանակման և համագործակցության գործընթացներում, այդ թվում՝ եվրոպական գործընկերների աճող շրջանակի հետ: Անդրադառնալով տեղական նշանակություն ունեցող հարցերի՝ հայաստանյան արվեստը միաժամանակ արձագանքում է համաշխարհային կարևորության խնդիրներին: Հաշվի առնելով այս միջազգային ուշադրությունը և կայունության հիմնահարցերի շուրջ զարգացող խոսույթը, որը խթանվում է այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է COP17-ը, այժմ նաև ճիշտ ժամանակն է խորացնելու մշակույթի և բնապահպանության փոխհատման կետերի մեր ընկալումը և փորձելու հաղթահարել այն տարանջատումը, որը հաճախ նկատում ենք այս ոլորտների միջև:

Արդյունավետ ռազմավարություններ մշակելուց առաջ անհրաժեշտ է հասկանալ արդեն իսկ գոյություն ունեցող գործելակերպերը, վերհանել մարտահրավերները և ուրվագծել

հնարավորությունները: Եվրոպայում այս մոտեցումն արդեն իսկ հիմք է դարձել մի շարք կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի համար:

«Ստեղծագործ Եվրոպա» (Creative Europe), «Մշակույթը շարժում է Եվրոպան» (Culture Moves Europe) և «Նոր եվրոպական Բաուհաուս» (New European Bauhaus) ծրագրերն ու նախաձեռնությունները կայունությունը դարձնում են մշակութային համագործակցության և զարգացման առանցքային բաղադրիչ, իսկ այնպիսի առաջամարտիկ նախաձեռնություններ, ինչպիսիք են Միացյալ Թագավորության «Ջուլիի հեծանիվը» (Julie's Bicycle) և Գերմանիայի մշակույթի դաշնային հիմնադրամի «Ջրո հիմնադրամը» (Fonds Zero), ցույց են տվել, թե ինչպես կարող են փաստական տվյալների վրա հիմնված մոտեցումները նպաստել մշակութային ոլորտի կայուն փոխակերպմանը:

Հենց այս համատեքստում էլ ձևավորվել է «կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն» նախագիծը: «ՅՈՒՆԻՔ կլաստերային հիմնադրամ 2025» (EUNIC Cluster Fund 2025) ծրագրի ֆինանսավորմամբ և «ՅՈՒՆԻՔ Հայաստան»-ի կողմից իրականացվող ավելի լայն ծրագրի շրջանակում կատարված այս հետազոտությունն իր տեսակի մեջ առաջին մասնագիտացված ուսումնասիրությունն է Հայաստանում: Այն ներկայացնում է Հայաստանի մշակութային դաշտում կայունությանն առնչվող գործելակերպերի, մարտահրավերների և հնարավորությունների նախնական քարտեզագրում և արժեքավոր գիտելիք է ներդնում հետազոտության ու քաղաքականության ձևավորման այս նոր զարգացող ոլորտում: Բաց մրցույթից հետո բազմաթիվ բարձր որակավորում ունեցող դիմորդներից ուրախ էինք որպես հետազոտությունն իրականացնող գործընկեր ընտրել Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան (CSN Lab): Միջոլորտային մշակութային հետազոտությունների հարուստ փորձի շնորհիվ CSN Lab-ը լավագույնս համապատասխանում էր այս ուսումնասիրությունն իրականացնելու պահանջներին: Արդյունքում ստեղծվել է կարևոր հետազոտություն, որը ոչ միայն փաստագրում է արդեն գոյություն ունեցող պրակտիկաները, այլև քննարկման, համագործակցության

և քաղաքականությունների մշակման նոր հեռանկարներ է առաջարկում:

Ցանկանում եմ խորին երախտագիտությունս հայտնել բոլոր այն մարդկանց, որոնք իրենց ներդրումն են ունեցել այս նախագծում: Շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը՝ այս նախաձեռնության կարևորությանը հավատալու և դրա իրականացման համաֆինանսավորմանն աջակցելու համար, «Սոցիոսկոպ» ՀԿ-ին՝ ծրագրի սկզբնական փուլում տրամադրած փորձագիտական և կազմակերպչական աջակցության համար, Բրյուսելում «ՅՈՒՆԻՔ»-ի գլխավոր գրասենյակին՝ խրախուսանքի և հետաքրքրվածության համար, ինչպես նաև մասնակից բոլոր հաստատություններին, փորձագետներին, արվեստագետներին, մշակույթի գործիչներին և հետազոտողներին, որոնք մեծահոգաբար կիսվել են իրենց գիտելիքներով և փորձով:

Ամենից առաջ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «ՅՈՒՆԻՔ Հայաստան»-ի իմ գործընկերներին: Լինելով դեռևս երիտասարդ ցանց՝ «ՅՈՒՆԻՔ Հայաստան»-ը կառուցվել է փոխադարձ վստահության, գործընկերության և այն ընդհանուր համոզմունքի վրա, որ մշակութային համագործակցությունը կարևոր է: Մեր անդամների պատրաստակամությունը՝ ներդրում ունենալու այս ցանցի զարգացման մեջ, աջակցելու դրա շարունակական աշխատանքին և միասին ուսումնասիրելու համագործակցության նոր ուղղությունները, հիմնարար նշանակություն է ունեցել այս նախագծի հաջողության համար: Այս հրապարակումը նաև արտացոլում է այն ընդհանուր վստահությունն ու հանձնառությունը, որոնց վրա հիմնված է մեր համատեղ աշխատանքը «ՅՈՒՆԻՔ Հայաստան» ցանցում:

Հուսով եմ՝ այս հրապարակումը մեկնարկային կետ կդառնա հետագա հետազոտությունների, երկխոսության և գործողությունների համար: Եթե ցանկանում ենք, որ բնապահպանական անցումը պսակվի հաջողությամբ, այն պետք է լինի նաև մշակութային անցում: Հասկանալ, թե որտեղ ենք գտնվում այսօր, առաջին քայլն է Հայաստանում և նրա սահմաններից դուրս մշակույթի առավել կայուն ապագա ձևավորելու ճանապարհին:

Ամփոփագիր

«Կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն» հետազոտական ծրագիրը, որը նախաձեռնել է ՅՈՒՆԻՔ Հայաստանը, Հայաստանի մշակութային և ստեղծարար ոլորտում կայունության պրակտիկաների, շրջակա միջավայրին վերաբերող հարցերի ներգրավման և քաղաքականության շրջանակների առաջին միջոլորտային ուսումնասիրությունն է: Այս մոտեցումը և դիտանկյունը մշակվել է Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի (CSN Lab) կողմից՝ հիմնվելով Հայաստանի և Հարավային Կովկասի մշակութային դաշտում երկար տարիների աշխատանքի վրա: Միավորելով բազմազան գիտակարգեր և փորձագիտական դիտանկյուններ, այս հետազոտությունը միտված է մշակույթի ժողովրդավարացմանն ու ամրապնդմանը՝ միաժամանակ մշակույթը դիտարկելով որպես բաց համակարգ, որը կարող է համագործակցել հարակից ոլորտների հետ և աջակցել դրանց[1]:

1 CSN Lab-ի կողմից իրականացված այս հետազոտությանը նախորդել են 2018 թվականից ի վեր Հայաստանում անցկացված մի շարք միջոլորտային ուսումնասիրություններ, որոնք կենտրոնանում են մշակութային իրավունքների և միգրացիայի, մշակույթի և սեռային (գենդերային)

Մշակույթի և էկոլոգիայի խաչմերուկում իրականացված այս հետազոտությունը մասնավորապես վերլուծում է, թե ինչպես են մշակութային գործիչները՝ անկախ արվեստագետներից և մշակութային կազմակերպություններից մինչև պետական հաստատություններ, իրենց աշխատանքում և ինստիտուցիոնալ պրակտիկայում զգայուն միջավայրային խնդիրների նկատմամբ, և թե ինչպես է դա արտացոլվում ազգային քաղաքականության մեջ և որոշումների կայացման մեխանիզմներում:

Հիմնվելով հետազոտությունների քարտեզագրման, քաղաքականության վերլուծության, ինչպես նաև մշակութային ու շրջակա միջավայրի ոլորտների փորձագետների, պետական և ոչ պետական հաստատությունների ներկայացուցիչների, ակտիվիստների և խորհրդատուների հետ որակական հարցազրույցների վրա՝ սույն հետազոտությունը Հայաստանի մշակութային ոլորտը տեղորոշում է համաշխարհային կանաչ անցման և Եվրոպական միության կայունության օրակարգի ավելի լայն համատեքստում:

«Կանաչ Հայաստան» հետազոտությունը բացահայտում է Հայաստանում կայունությանն ուղղված մշակութային նախաձեռնությունները, քարտեզագրում այն արվեստագետներին, մշակութային գործիչներին և համայնքային կազմակերպություններին, որոնք ակտիվորեն զբաղվում են էկոլոգիական թեմաներով՝ ցուցահանդեսների, ֆիլմերի, ներկայացումների, կացության ծրագրերի, փառատոնների և այլ ձևաչափերի համադրմամբ: Այս գործողությունները նպաստում են միջավայրային խնդիրների շուրջ իրազեկությանը, կրթությանը և հանրային երկխոսությանը՝ հաճախ բարդ էկոլոգիական խնդիրները վերածելով հասանելի և փորձառական ձևերի: Ջուգահեռաբար, որոշ մշակութային հաստատություններ արդեն իսկ որդեգրում են շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու պրակտիկաներ և իրականացնում

դինամիկայի, մշակույթի և հիշողության քաղաքականության, մշակույթի և հակամարտության վերափոխման, մշակույթի և ջրային ժառանգության և դրանց հետ կապված թեմաների վրա:

էներգախնայողության միջոցառումներ, անցնում վերականգնվող էներգիայի սպառման, խթանում նյութերի վերօգտագործումը և թվայնացման նախաձեռնությունները, որոնք կարող են նվազեցնել ֆիզիկական ռեսուրսների օգտագործման և նյութերի մշակման որոշակի ձևեր:

Այնուամենայնիվ, այս նախաձեռնությունները հիմնականում մնում են մեկուսացված և կախված են անհատական առաջնորդությունից, արտաքին ֆինանսավորումից կամ անձնական նվիրումից, և չեն ստանում համակարգային աջակցություն: Այս անհավասարակշռության համատեքստում հետազոտությունը վեր է հանում երեք փոխկապակցված բաց, որոնք սահմանափակում են մշակութային ոլորտում կայունության հնարավոր ազդեցությունը և ընդլայնելիությունը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՑ . ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նախևառաջ, երկարաժամկետ դիտարկումներն ակնհայտ են դարձնում հայեցակարգային մակարդակում ընդհանուր բառապաշարի և վերլուծական շրջանակի բացակայությունը, որն անհրաժեշտ նախապայման է ձևակերպելու մշակույթը և շրջակա միջավայրի կայունությունը՝ որպես փոխկապակցված ոլորտներ հայաստանյան մշակութային դաշտում: Մինչ կայունության միջազգային շրջանակները ավելի ու ավելի հստակեցվում և ինստիտուցիոնալացվում են, հայաստանյան պետական հաստատություններում, մշակութային նախաձեռնություններում, ՔՀԿ-ներում և ֆինանսավորման մեխանիզմներում դրանց մեկնաբանությունները և թարգմանությունը էականորեն տարբերվում են: Շատ դեպքերում կայունության եզրաբանությունն ընդունվում է առանց ամուր համատեքստային հիմքի կամ ընդհանրապես չի թարգմանվում գործառնական հասկացություններով:

Մշակույթը շարունակում է հիմնականում ընկալվել ժառանգության պահպանման կամ գեղարվեստական արտադրության պրիզմայով, մինչ շրջակա միջավայրի քաղաքականությունը մեծապես սահմանվում է տեխնիկական

և էկոլոգիական կառավարման տեսանկյունից: Այս հայեցակարգային տարանջատումը տարածվում է պետական քաղաքականությունից անդին և արտացոլվում է ինստիտուցիոնալ մանդատներում, ֆինանսավորման մեխանիզմներում և ծրագրային նախագծերում: Արդյունքում, էկոլոգիայի շուրջ մշակութային գիտելիքը, պրակտիկաները և կապակցային ըմբռնումները բավարար չափով չեն ներառվում կայունության վերաբերյալ խոսույթում: Առանց ընդհանուր և տեղահեն հայեցակարգային շրջանակի ու բառապաշարի կայունությունը վտանգված է դառնալ կամ վերացական գլոբալ օրակարգ, կամ նախաձեռնությունների մասնատված ամբողջություն, և ոչ թե Հայաստանի հստակ սոցիալական իրականություններին, ինստիտուցիոնալ կառուցվածքներին և մշակութային գործընթացներին համապատասխանող համակարգված մոտեցում:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՑ . ՄԱՍՆԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՆ ՊԱԿԱՍ

Երկրորդ՝ ինստիտուցիոնալ մակարդակում մասնատումը խոչընդոտում է միջոլորտային արդյունավետ համագործակցությանը: Մշակույթում կայունության խնդրի շուրջ աշխատող հիմնական նախարարությունները, մասնավորապես՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Շրջակա միջավայրի նախարարությունը, մեծ մասամբ գործում են մեկուսացված՝ թույլ կամ ընդհանրապես գոյություն չունեցող համագործակցության մեխանիզմներով: Արդյունքում, ինտեգրված մշակութային-միջավայրային քաղաքականության, համատեղ ծրագրերի և համատեղ իրականացման ռազմավարությունների հնարավորությունները հաճախ բաց են թողնվում: Պետական մշակութային հաստատությունները, այդ թվում՝ գրադարանները, արխիվները և թանգարանները, գործում են առանց համապարփակ ազգային կայունության շրջանակի, որի հետևանքով կայունությանն ուղղված ջանքերը մնում են տեղայնացված և դժվար ընդլայնելի:

ՏԵՍԱԼԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԸ. ԹԵՐՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ

Երրորդ՝ տեսանելիության և շարունակականության առումով, կայունության վրա հիմնված մշակութային գործունեությունը, մասնավորապես անկախ արվեստագետների, մշակութային նախաձեռնությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջավայրազգայուն աշխատանքը մնում է թերփաստագրված, թերճանաչված և մեծապես արտամղված ազգային զարգացման ռազմավարություններից: Չնայած Հայաստանում բնապահպանական շարժումների և մշակութային գործիչների համագործակցության եզակի փորձերի արդյունավետությանը, նման փոխհատումները մնում են դրվագային և չեն ստանում համակարգային աջակցություն:

Մշակույթի և կայունության փոխհատման կետում աշխատող բազմաթիվ մշակութային կազմակերպություններ և ՔՀԿ-ներ գործում են առանց հստակ ինստիտուցիոնալ շրջանակների, երկարաժամկետ ֆինանսավորման մեխանիզմների կամ համապատասխան հարթակների, որոնք կապահովեին կայուն ներգրավվածություն: Արդյունքում, այս նախաձեռնությունները հաճախ մնում են նախագծային և մասնատված՝ տեսանելիության, գիտելիքների կուտակման, փաստաթղթավորման և երկարաժամկետ քաղաքականության ձևավորման սահմանափակ կարողություններով: Միջոլորտային փոխանակման ինստիտուցիոնալացված հարթակների բացակայությունը թուլացնում է շարունակականությունը և խոչընդոտում կայունությանն ուղղված մշակութային աշխատանքի ներդրմանն ավելի լայն զարգացման գործընթացներում:


«կանաչ Հայաստան» հետազոտությունը նաև ուսումնասիրում է թվայնացումը՝ որպես մշակութային հաստատությունների կայունության ռազմավարության հիմնական տարրերից մեկը: Թեև թվայնացումը նպաստում է ժառանգության պահպանմանը և հասանելիությանը և կարող է նվազեցնել որոշակի նյութական ճնշումները, այն նաև առաջացնում է բնապահպանական մարտահրավերներ՝ կապված էներգիայի սպառման, տվյալների

ենթակառուցվածքների, սարքավորումների հարատևության և արհեստական բանականության աճող սպառման հետ: Առանց հստակ քաղաքականության և ուղեցույցի, թվայնացման գործընթացը կրում է վտանգներ «կանաչ» բնութագրի ներքո խորացնելու առկա միջավայրային ճգնաժամը, ավելացնելու ռեսուրսների սպառումը, մեծացնելու էլեկտրոնային թափոնների ծավալը, ինչպես նաև վատթարացնելու մշակութային իրավունքների և մտավոր սեփականության պաշտպանության դրությունը:

Վերոնշյալ հիմնախնդիրներն ուսումնասիրելով, սույն հետազոտությունը եզրակացնում է, որ Հայաստանի կանաչ անցումը հնարավոր չէ իրականացնել միայն տեխնոլոգիական և տնտեսական միջոցառումների իրագործմամբ: Այն պետք է նաև ընկալվի որպես մշակութային և ժողովրդավարական գործընթաց, որը վերաձևավորում է արժեքներ, վարքագիծ, համակեցության և համագործակցության եղանակներ: Մշակույթն ունի այս անցումն առաջնորդելու զգալի ներուժ՝ խթանելով հանրային ներգրավվածությունը, քննադատական մտածողությունը և կայունության տեղային տեսլականները: Սակայն այս ներուժի իրացումը պահանջում է մշակույթի վերանայված դիրքավորում շրջակա միջավայրի կառավարման և քաղաքականության մշակման գործընթացներում:

Հետևաբար, «կանաչ Հայաստան» հետազոտությունը կոչ է անում ճանաչել մշակույթը որպես ակտիվ գործոնդ Հայաստանի կանաչ անցման, մասնավորապես միջազգային կայունության շրջանակների համատեքստային թարգմանության և տեղայնացման, տեղային հայեցակարգային շրջանակների և սահմանումների մշակման, միջոլորտային համակարգման մեխանիզմների ստեղծման, մշակութային ոլորտում կայուն ինստիտուցիոնալ գործունեության նպատակային աջակցության, ինչպես նաև թվայնացման և արհեստական բանականության օգտագործման համար հստակ բնապահպանական և էթիկական քաղաքականության մշակման գործընթացներում: Այս բացերի լրացումը կամրապնդի քաղաքականության փոխհամաձայնությունը, կբարձրացնի ժողովրդավարական

մասնակցությունը և կաջակցի Հայաստանում կայունության նկատմամբ ավելի ներառական, տևական և մշակութահեն մոտեցմանը։



Ներածություն

Մշակութային կայունությունը որպես գործունեություն և քաղաքականություն

1.1 ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԼԱԿ

1.1.1 Հետազոտության նպատակը

Կլիմայի փոփոխությունը և շրջակա միջավայրի փոխակերպումները վերափոխում են մշակութային դերակատարների պատասխանատվությունն ու գործելակերպն ամբողջ աշխարհում՝ էկոլոգիական ճգնաժամի շրջափուլում հանգեցնելով մշակութային և գեղարվեստական արտադրության դերի վերագնահատման[2]: Մշակութային պրակտիկաներն այլևս չեն ընկալվում միայն որպես սոցիալական և քաղաքական գործընթացների շուրջ մտորումներ. դրանք ավելի ու ավելի են ճանաչվում որպես տարածքներ, որտեղ կարելի է քննարկել և պատկերացնել այլընտրանքային ապագաներ[3]:

2 UNESCO, Culture and Climate Change. Տե՛ս https://www.unesco.org/en/climate-change/culture, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

3 Julie's Bicycle. Counting on Culture: How to Stop Financing the Environmental Crises, London, 2025. Տե՛ս https://juliesbicycle.org/wp-content/uploads/2025/09/Counting-on-Culture-1.pdf, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

Քանի որ միջավայրային ճգնաժամերը սրվում են ամբողջ աշխարհում, մշակույթն ու արվեստը ճանաչում են ձեռք բերում որպես էկոլոգիական վերափոխման գործում կարևոր դերակատարներ: Որպես լայն հանրային շրջանակներ ներգրավող ոլորտներ և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ՝ ստեղծարար գործունեությունը և մշակութային հաստատությունները կարող են խթանել էկոլոգիական իրազեկությունը, ազդել սոցիալական նորմերի վրա և աջակցել համակարգային ավելի լայն փոփոխություններին: Միևնույն ժամանակ, մշակույթի կայունությունը չի կարող սահմանափակվել թեմատիկ ծրագրավորմամբ կամ կարճաժամկետ նախագծերով: Այն պահանջում է կայուն կառուցվածքային վերափոխումներ մշակութային արտադրության, կրթության և ինստիտուցիոնալ կառավարման ոլորտներում:

Այս ներգրավումը պետք է տեղակայվի հանրային ավելի լայն զարգացման շրջանակներում, որը սովորաբար անվանում են «կանաչ անցում», այսինքն՝ տնտեսական և սոցիալական համակարգերի վերափոխումը դեպի շրջակա միջավայրի կայունություն, որի նպատակն է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները, պաշտպանել էկոհամակարգերը և բարելավել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Եվրոպական միության համատեքստում այս անցումը նպատակ ունի մինչև 2050 թվականը հասնել կլիմայական չեզոքության և ներառված է քաղաքականության բոլոր ոլորտներում՝ այնպիսի շրջանակների միջոցով, ինչպիսին Եվրոպական կանաչ գործարքն է[4]:

Միջազգային այս զարգացումների վրա հիմնվելով՝ «Կանաչ Հայաստան» հետազոտությունը նպատակաուղղված է ուսումնասիրել, թե ինչպես են կայունությունը, մշակույթն ու արվեստը փոխհատվում հայկական համատեքստում: Հետազոտությունը քննում է և՛ մշակութային գործելակերպերը, և՛ քաղաքականության շրջանակները՝ գնահատելու,

4 European Commission, The European Green Deal. Տե՛ս https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/european-green-deal_en [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

թե որտեղ է ինստիտուցիոնալ և գեղարվեստական գործունեությունում կայունությունն արդեն իսկ ներդրված, և որտեղ է քաղաքականությունը հնարավորություն տալիս կամ սահմանափակում նման ջանքերը, և արդյոք ներկայումս գոյություն ունեն մշակույթի և շրջակա միջավայրի կառավարման իմաստալից փոխհատումներ:

ԵՄ կայունության օրակարգերի ավելի լայն շրջանակի համատեքստում վերլուծելով ինստիտուցիոնալ կառավարման կառուցվածքները, նյութական և թվային կայունության պրակտիկաները, գեղարվեստական մոտեցումները և քաղաքականության բացերը՝ սույն հետազոտությունը դիտարկում է մշակույթը և՛ որպես էկոլոգիական գործելակերպի վայր, և՛ որպես Հայաստանի կանաչ անցման գործում թերագնահատված գործոնդ: Նպատակը միջազգային մոդելները կրկնօրինակելը չէ, այլ համատեքստից կախված՝ առկա փորձի ու բացերի վերհանումը և առաջարկությունների մշակումը, որոնց հիմքում կլինի Հայաստանի մշակութային, ինստիտուցիոնալ և սոցիալ-քաղաքական իրականությունը:

1.1.2 Մշակույթը՝ էկոլոգիական փոփոխության գործոնդ

Մինչ կանաչ անցումը հաճախ սահմանվում է տնտեսական վերակառուցման և տեխնոլոգիական նորարարության միջոցով, դրա իրականացումը, վերջիվերջո, կախված է սոցիալական ընդունումից, հանրային լեգիտիմությունից և առօրյա գործունեության փոփոխություններից[5]: Այս իմաստով, էկոլոգիական փոխակերպումն անքակտելի է մշակութային գործընթացներից, որոնք ձևավորում են շրջակա միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների ընկալումը, դրանց մեկնաբանությունը և դրանց հետ փոխհարաբերությունը:

Մշակութային և ստեղծարար ոլորտը (ՄՍՈ) ներկայացնում է գեղարվեստական արտադրության,

5 Culture2030Goal Campaign. (2024, February 2). No future without culture: #Culture2030Goal statement. Տե՛ս https://culture-2030goal.net/sites/default/files/2024-02/EN_culture2030goal_Feb2024_Statement.pdf, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

ինստիտուցիոնալ գործունեության և հանրային ներգրավման բազմազան էկոհամակարգ: Թեպետ մշակութային ոլորտը և ժառանգությունը նույնպես տուժում են կլիմայի փոփոխությունից[6] (նաև ոլորտն ինքնին ունի շրջակա միջավայրի վրա ազդեցություն),[7] դրանց ավելի լայն նշանակությունը հանրային խոսույթի և սոցիալական երևակայության վրա ազդելու կարողությունն է[8]: Պատմասանության, վիզուալ արվեստի, ներկայացման և հավաքական փորձի միջոցով մշակութային գործիչները մասնակցում են կլիմայի փոփոխության ընկալման, բնական միջավայրի հետ փոխհարաբերությունների շուրջ իմաստների և դրա նկատմամբ պատասխանատվության կառուցմանը: Այս գործընթացները նպաստում են վարքային նորմերի ձևավորմանը և ազդում են հասարակական մակարդակում կայունության ընկալման վրա:

Մշակութային ինքնությունը նույնպես կենտրոնական դեր է խաղում՝ որոշելու, թե ինչպես են բնապահպանական խնդիրները ձևակերպվում տվյալ համատեքստում[9]: Համայնքների վերաբերմունքը հողին, ջրին և ժառանգությանը միջնորդվում է պատմական նարատիվներով, հավաքական հիշողությամբ և սոցիալական արժեքներով: Հետևաբար, էկոլոգիական անցումը չի կարող ապավինել միայն կարգավորիչ միջոցառումներին կամ տեխնիկական միջամտություններին. այն պետք է համագործակցի

---

6 Homer-Dixon, Thomas. The Great Transformation: Climate Change as Cultural Change. Տե՛ս https://homerdixon.com/resource/the-great-transformation-climate-change-as-cultural-change/, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

7 Moore, Suzanne, and Adam Tickell. The Arts and Environmental Sustainability: An International Overview. D'Art Topics in Arts Policy, no. 34b. Sydney: International Federation of Arts Councils and Culture Agencies (IFACCA) and Julie's Bicycle, 2014. Տե՛ս https://ifacca.org/media/filer_public/ae/39/ae3972ff-4e7c-43a5-a02d-33c08df8dd43/ifacca_dart_report_34b_final.pdf, [հասանելի է 05 . 02 . 2026-ի դրությամբ]:

8 Faizullah Ahmad. "The Role of Environmental Art in Society," in Media and Environmental Ethics: A Sustainable Approach (SSDN Publishers and Distributors, 2025), 165–176.

9 Hoffman, A. J. (2015). *How culture shapes the climate change debate. Stanford University Press.*

մշակութային շրջանակների հետ, որոնք ձևավորում են հանրային վերաբերմունքն ու գործելակերպը:

Այս դինամիկան հատկապես արդի է Հայաստանում, որտեղ հանրային ընկալումը և բնապահպանական նախաձեռնություններում համայնքների ներգրավումը մնում է սահմանափակ: Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի և ACT Global-ի կողմից Հայաստանում կանաչ անցմանն աջակցելու հանրային պատրաստվածության և պատրաստակամության վերաբերյալ վերջերս կատարված հետազոտությունն ընդգծում է հասարակական ընկալման կարևորությունը բնապահպանական գործում: Քաղաքային և գյուղական բնակավայրերում, տարբեր ժողովրդագրական խմբերից շուրջ 1000 անձի շրջանում անցկացված հարցումը ցույց է տալիս բնապահպանական նախաձեռնությունների նկատմամբ հանրային աջակցության համեմատաբար ցածր մակարդակ: Հաղորդված խոչընդոտների թվում են լայնորեն տարածված անտարբերությունը (84%), իրազեկության պակասը (72%), այն ընկալումը, որ բնապահպանական գործողությունները տարածված պրակտիկա չեն (33%) և այն համոզմունքը, որ նման գործողությունները որևէ շոշափելի օգուտ չեն տալիս (17%)[10]:

Այս արդյունքները վկայում են, որ Հայաստանում կանաչ անցումը սահմանափակված չէ միայն տեխնիկական կարողություններով կամ կարգավորման բացերով, այլև մշակութային և հասարակական ընկալման գործոններով: Նման համատեքստում մշակութային և ստեղծարար նախաձեռնությունները կարող են գործել որպես միջնորդ հարթակներ, որոնք բնապահպանական մարտահրավերները վերածում են տեղային իմաստալից պատումների, խթանում են հավաքական ներգրավվածությունը և նպաստում են կայունության նկատմամբ հանրային վերաբերմունքի վերաձևավորմանը:

10 ACT Global. Public Readiness and Willingness to Support Initiatives for a Green Transition in Armenia: Country Report. Stockholm: Stockholm Environment Institute (SEI), 2024. Տե՛ս https://green-agenda.org/storage/public/EYUz6y6oncwCegeA0xIh0aiK1d7gQI-metaQXJtZW5pYV9FTkcucGRm-.pdf, [հասանելի է 07 . 02 . 2026-ի դրությամբ]:

1.1.3 Մշակույթը կայունության շրջանակներում և քաղաքականություններում

Միջազգային քաղաքականության խոսույթում մշակութային ոլորտի կայունությունը դիտարկվում է և՛ որպես գործառնական պատասխանատվություն, և՛ որպես զարգացման նպատակ: Այն ընդգրկում է երկու փոխկապակցված չափում. մշակութային հաստատությունների և արտադրական գործընթացների բնապահպանական կատարողականը և մշակույթի ներդրումը ավելի լայն սոցիալական և էկոլոգիական վերափոխման գործում:

Գործառնական մակարդակում սա ներառում է էներգիայի սպառումը, նյութերի օգտագործումը, շարժունության ձևերը, ենթակառուցվածքների կառավարումը և մշակութային արտադրության թողած հետքը շրջակա միջավայրի վրա: Հասարակական մակարդակում դա վերաբերում է հավաքական արժեքների, նարատիվների և մասնակցության ձևերի կազմավորման գործում մշակույթի դերին: Այս հետազոտության համատեքստում երկու չափումներն էլ համարվում են էական, և դրանց վերլուծությունն ի ցույց է դնում, թե ինչպես է կայունությունը գործում Հայաստանի մշակութային ոլորտում:

Միջազգային շրջանակներն ավելի ու ավելի են պաշտոնականացնում մշակույթի այս կրկնակի դիրքավորումը: Օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակույթ | 2030 ցուցանիշները մշակույթը ներառում են կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) դիտարկման (մոնիթորինգ) համակարգի մեջ՝ այն դարձնելով ինքնուրույն ոլորտ և կայուն զարգացման միջոլորտային խթանիչ: Շրջանակը ներկայացնում է չափելի ցուցանիշներ սոցիալական, բնապահպանական, տնտեսական և կառավարման ոլորտների միջև՝ ամրապնդելով այն տեսակետը, որ մշակույթը կառուցվածքայնորեն նպաստում է դիմակայուն և ներառական հասարակությունների ձևավորմանը[11]:

11 UNESCO. (2019). UNESCO Culture|2030 Indicators: Thematic indicators for culture in the 2030 Agenda for Sustainable Development. UNESCO. Տե՛ս https://whc.unesco.org/en/cul-

Նմանապես, Եվրոպական միության շրջանակներում կայունության օրակարգերը մշակույթը տեղակայում են ավելի լայն փոխակերպման ռազմավարություններում: Եվրոպական կանաչ գործարքը (ԵԿԳ) մինչև 2050 թվականը կլիմայական չեզոքությունը սահմանում է որպես կենտրոնական նպատակ և համակարգված գործողություններ է ներկայացնում՝ ուղղված ապաածխածնացմանը, կենսաբազմազանության պաշտպանությանը, ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և աղտոտվածության զրոյացմանը[12]: Կրելով հիմնականում կարգավորող և տնտեսական բնույթ՝ ԵԿԳ-ն ընդունում է, որ էկոլոգիական անցումը պահանջում է նաև հասարակական գործողությունների համաձայնեցում բոլոր ոլորտներում[13]:

Այս ճանաչման վրա հիմնվելով՝ Նոր Եվրոպական Բաուհաուսը (ՆԵԲ) հստակորեն ներառում է մշակութային, սոցիալական և գեղագիտական հիմնահարցերը կայունության քաղաքականության մեջ: Կլիմայական չեզոքության նպատակները դիզայնի, ճարտարապետության և համայնքային նախաձեռնությունների հետ կապելով՝ ՆԵԲ-ը մշակույթը դիտարկում է ոչ միայն որպես բնապահպանական թիրախներին ադապտացվող ոլորտ, այլև որպես գործոն, որը ձևավորում է կանաչ անցման առօրյա փորձառությունը[14]:

Ընդհանուր առմամբ այս շրջանակները ստեղծում են քաղաքականության մի միջավայր, որտեղ մշակույթն ավելի ու ավելի է ճանաչվում որպես կայունությանն ուղղակիորեն և

---

ture2030indicators/#publication, [հասանելի է 10 . 02 . 2026-ի դրությամբ]:

12 European Commission. The European Green Deal. Տե՛ս https://commission.europa.eu/strategy-and-policy/priorities-2019-2024/european-green-deal_en, [հասանելի է 10 . 02 . 2026-ի դրությամբ]:

13 Hosagrahar, J. (2023). Culture: at the heart of Sustainable Development Goals. UNESCO Courier. [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ] . Տե՛ս https://courier.unesco.org/en/articles/culture-heart-sustainable-development-goalshttps://courier.unesco.org/en/articles/culture-heart-sustainable-development-goals

14 European Commission. New European Bauhaus: beautiful, sustainable, together. Տե՛ս https://new-european-bauhaus.europa.eu/index_en, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

կառուցվածքայնորեն առնչվող գործոն: Դրանք ապահովում են հղման համակարգ, որի համեմատությամբ հայկական համատեքստն ուսումնասիրվում է սույն հետազոտության հաջորդ բաժիններում:

1.1.4 Տեղային համատեքստ

Մինչ միջազգային կայունության շրջանակները տրամադրում են հղման մոդելներ, դրանց իրականացումը կախված է ազգային պայմաններից և ելակետից: Հայաստանում կայունությունը պետք է հասկանալ միջավայրային ճնշումների, ինստիտուցիոնալ վերափոխման և աշխարհաքաղաքական խոցելիության համատեքստում:

Համաձայն Հայաստանի երկրորդ բնապահպանական կատարողականի (Second Environmental Performance Review of Armenia) վերաբերյալ զեկույցի՝ երկիրը բախվում է մշտական և վերադրվող բնապահպանական մարտահրավերների, այդ թվում՝ թափոնների և քիմիական նյութերի անարդյունավետ կառավարման, օդի աղտոտվածության, ջրի սակավության, անտառահատման, կենսաբազմազանության կորստի և հողի քայքայման խնդիրների, որոնք կապված են արդյունահանող արդյունաբերության հետ[15]: Այս կառուցվածքային բնապահպանական ճնշումները ձևավորում են այն առկա իրադրությունը, որի հիման վրա քննարկվում և իրականացվում են կայունության քաղաքականությունները:

Հայաստանի մշակութային և ինստիտուցիոնալ լանդշաֆտը ձևավորվել է հետխորհրդային անցումային ժամանակաշրջանի ժառանգությամբ: Այս շրջանը նշանավորվել է ինստիտուցիոնալ մասնատմամբ, տնտեսական անկայունությամբ և շրջանների ու ոլորտների միջև ռեսուրսների անհավասար բաշխմամբ: Բնության

15 United Nations Economic Commission for Europe (UNECE). Second Environmental Performance Review of Armenia. Environmental Performance Reviews Series No. 37. New York and Geneva: United Nations, 2014. Տ՛ս https://unece.org/environment-policy/publications/2nd-environmental-performance-review-armenia, [հասանելի է 07 . 02 . 2026-ի դրությամբ]:

նկատմամբ հոգատարության ավանդույթները և համայնքային գիտելիքները շարունակում են գոյակցել թուլացած հանրային ենթակառուցվածքների, մշակութային ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման կրճատման և արտաքին ֆինանսավորման աճով պայմանավորված կախվածության հետ: Այսպիսով, քաղաքականության ներդրումն ու իրականացումը հաճախ տեղի է ունենում սահմանափակ ինստիտուցիոնալ կարողությունների և կարճատև նախագծահեն ֆինանսավորման պայմաններում:

2018 թվականին թավշյա հեղափոխությամբ մեկնարկած քաղաքական վերափոխումները ձևավորեցին կառուցվածքային բարեփոխումների, թափանցիկության և մասնակցային կառավարման ակնկալիքներ: Այնուամենայնիվ, հետագա ճգնաժամերը, այդ թվում՝ COVID-19 համավարակը և տնտեսական անկայունությունը,[16] 2022 թվականին Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա և դրան հաջորդած ռուսական միգրացիան,[17] Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմը և 2023 թվականին հայերի տեղահանումը, ինչպես նաև առավել լայն տնտեսական անկայունությունը, զգալիորեն ազդել են ինստիտուցիոնալ շարունակականության և բարեփոխումների գործընթացների վրա: Այս խոչընդոտները հանգեցրել են քաղաքականության անհավասար իրականացման և մեծացրել են կառավարող մարմիններում ոլորտային/գերատեսչային մասնատումը:

16 UNESCO. Re|Shaping Policies for Creativity: Addressing Culture as a Global Public Good. Paris: UNESCO, 2022. Տե՛ս https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000380479, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

17 Amiryan, T. “Relocating” the Russian Cultural Scene: The Case of Russian Migrants in the South Caucasus (Armenia and Georgia). ifa Edition “Culture and Foreign Policy,” no. 7100. Stuttgart: ifa – Institut für Auslandsbeziehungen, 2024. Տե՛ս https://culturalrelations.ifa.de/en/research/results/relocating-the-russian-cultural-scene/, [հասանելի է 12 . 02 . 2026-ի դրությամբ]:

1.2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայունության համատեքստում առկա մարտահրավերները և բացերը հաշվի առնելով՝ «Կանաչ Հայաստան» հետազոտությունը կիրառում է որակական հետազոտության միջոլորտային մեթոդաբանություն՝ նպատակ ունենալով առաջին անգամ վերհանել Հայաստանում կայունության և մշակույթի փոխհատումը: Հետազոտությունը համատեղում է բազմաթիվ մեթոդներ՝ վերլուծելու ինչպես ինստիտուցիոնալ շրջանակները, այնպես էլ առկա կայուն պրակտիկաները:

Հետազոտությունը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

Հետազոտությունների քարտեզագրում և քաղաքականության վերլուծություն ⇝ Միջազգային և ազգային քաղաքականությունների, ռազմավարական շրջանակների, օրենսդրական կարգավորումների և համապատասխան ակադեմիական ու ոլորտային գրականության ուսումնասիրություն: Այս բաղադրիչը տեղակայում է հայաստանյան մշակութային ոլորտը կայունության ավելի լայն օրակարգերի համատեքստում և բացահայտում է համաձայնությունները, տարամիտումներն ու հայեցակարգային բացերը:

Մշակութային պրակտիկաների քարտեզագրում ⇝ Առկա մշակութային նախաձեռնությունների ուսումնասիրություն, որոնք պատկերում են կայունության և մշակույթի փոխհատման տարբեր եղանակներ: Այս քարտեզագրման նպատակը համընդհանուր փաստագրումը չէ, այլ արվեստագետների, մշակութային հաստատությունների և համայնքների պրակտիկաների ներկայացուցչական օրինակների բացահայտումը՝ ի ցույց դնելու կայունության մեկնաբանման ու իրականացման բազմազան պրակտիկաները:

Խորքային հարցազրույցներ ⇝ Հետազոտության շրջանակներում իրականացվել են խորքային հարցազրույցներ պետական և ոչ պետական մշակութային հաստատությունների, մշակութային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների,

շրջակա միջավայրի փորձագետների և էկոակտիվիստների հետ: Մասնակիցներն ընտրվել են կայունությանը վերաբերող քաղաքականության կամ գործունեության համապատասխանության հիմքով: Հարցազրույցների ընթացքում քննարկվել են կայունության հայեցակարգային ըմբռնումները, դրա ներդրման ինստիտուցիոնալ կարողությունները, միջոլորտային համագործակցությունը և կառուցվածքային խոչընդոտները:

Ընդհանուր առմամբ, այս մեթոդները թույլ են տալիս բացահայտել Հայաստանի մշակութային ոլորտում կրկնվող օրինաչափությունները, կառուցվածքային սահմանափակումները և երևան եկող պրակտիկաները:

1.3 ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՑ

Մշակութային ոլորտը ընդգրկում է լայն շրջանակի գիտակարգեր և ինստիտուցիոնալ ձևեր, որոնց համալիր քարտեզագրումն ու համապարփակ գնահատումը մեկ աշխատության շրջանակում իրագործելի չէ մասնավորապես մեթոդաբանական առումով: Հետևաբար, վերլուծությունը հիմնականում կենտրոնանում է հայաստանյան ստեղծարար արդյունաբերության, անկախ մշակութային գործիչների և մշակութային քաղաքականության ու գործունեության մեջ անմիջականորեն ներգրավված պետական հաստատությունների վրա:

Երկու ոլորտներ՝ հանրակրթության և ճարտարապետության/քաղաքային պլանավորման ոլորտները պահանջում են հետագա համապարփակ անդրադարձեր: Կրթության դերը շրջակա միջավայրի կայունության ամրապնդման գործում լայնորեն վերլուծվել և իրացվել է տարբեր միջազգային համատեքստերում,[18]

18 UNESCO. *Learn for Our Planet: A Global Review of How Environmental Issues Are Integrated in Education*. Paris: UNESCO, 2021. Տե՛ս https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000377362, [հասանելի է 10 . 02 . 2026-ի դրությամբ]:

սակայն դրա գործառույթը մշակույթի և շրջակա միջավայրի կայունության փոխհատման կետում մնում է թերուսումնասիրված: Թեպետ գոյություն ունեն էկոլոգիական կրթության պետական ռազմավարություններ[19] և անկախ նախաձեռնություններ, ինչպես նաև հետզհետե աճում է ներգրավված երիտասարդների թիվը,[20] կրթական հաստատությունների, մշակութային գործունեության և կայունության քաղաքականության միջև կառուցվածքային կապը պահանջում է ավելի համակարգված և համալիր վերլուծություն[21]:

Մշակութային գործունեության մեկ այլ ընդգրկուն տիրույթ, ինչպիսին՝ ճարտարապետությունը և քաղաքային պլանավորումն է, ունի զգալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա[22]: Հաշվի առնելով շինարարական գործունեության ազդեցությունը, մասնավորապես՝ խիտ բնակեցված քաղաքային միջավայրերում, ինչպիսին Երևանն է, անհրաժեշտ են հետագա հետազոտություններ՝ գնահատելու, թե ինչպես են կայունության սկզբունքները կիրառվում նախագծման և մշակման գործընթացներում, այդ

19 Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն: «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 22-ի նիստի N 7 արձանագրային որոշում: Տե՛ս http://env.am/naxararutyun/strategy, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

20 UNICEF Armenia. «Հայաստանում կլիմայի փոփոխության և դեռահասների մասնակցության վերաբերյալ հետազոտություն. Գիտելիքի, վերաբերմունքի, փորձառության և վարքագծի ուսումնասիրություն». Երևան: 2023. Տե՛ս https://www.unicef.org/armenia/զեկույցներ/հայաստանում-կլիմայի-փոփոխության-և-դեռահասների-մասնակցության-վերաբերյալ-հետազոտություն, [հասանելի է 12 . 02 . 2026-ի դրությամբ]:

21 Martirosyan, T., Tshughuryan, A., Khachatryan, N., & Harutyunyan, A. “Challenges of Green Education Quality Assessment in Armenia”. Proceedings on Engineering Sciences, 7(4), 2025, pp. 2265-2274. Տե՛ս https://doi.org/10.24874/PES07.04.012, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

22 Yuan, Jihui, Farzaneh Hadaﬁ, Ali Sarraﬁ Nik, Behnam Ghasemzadeh, and Xiangfei Kong. “Architectural contributions to climate change mitigation in urban residential contexts through a global qualitative approach.” Discover Sustainability 6, no. 1 (2025): 1002.

թվում տարբերակելու համար իրական բնապահպանական ինտեգրացիան անվանական դիրքավորումից[23]:

Կարևոր է նաև նշել, որ Հայաստանում մշակույթի և շրջակա միջավայրի փոխհատման կետում առկա հետազոտություններն ու քաղաքականության ներգրավումը հիմնականում կենտրոնացած են զբոսաշրջության ոլորտում: Մինչ կայուն զբոսաշրջության զարգացումը և նյութական ժառանգության պաշտպանությունը մնում են գործունեության կարևոր ոլորտներ, այս կենտրոնացումը նպաստել է կայունության շուրջ քննարկումներում այլ մշակութային բաղադրիչների հարաբերական լուսանցքավորմանը: Հետևաբար, անհրաժեշտ է ընդլայնել հետազոտությունները զբոսաշրջությունից անդին՝ կայուն պրակտիկաների առաջխաղացման գործում մշակույթի ավելի լայն կառուցվածքային դերը բացահայտելու համար:

23 Papoyan, Atanes, and Changhong Zhan. “Analysis of Armenia’s Green Building and Vision Proposal.” In IOP Conference Series: Earth and Environmental Science, vol. 812, no. 1, p. 012013. IOP Publishing, 2021.

Հայաստանի մշակութային ոլորտի կայունությունը

Հայկական մշակութային ոլորտի կայունության գնահատումը պահանջում է դրա ուսումնասիրության երեք փոխկապակցված չափանիշ: Նախ, այն ներառում է անկախ/անհատական, ինստիտուցիոնալ և համայնքային մշակութային նախաձեռնություններում ի հայտ եկող առկա կայուն պրակտիկաների բացահայտումը: Երկրորդ. այն պահանջում է վերլուծել, թե ինչպես է կայունությունը արտացոլվում պետական և անկախ հաստատությունների քաղաքականություններում և մոտեցումներում: Երրորդ. այն պահանջում է գնահատել, թե որքանով են ազգային ռազմավարություններն ու կառավարման շրջանակները համապատասխան կամ անհամապատասխան կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) նպատակներին: Ընդհանուր առմամբ, այս երեք ուղղությունները համապարփակ պատկեր են տալիս այն մասին, թե ինչպես է կայունությունն այժմ գործում Հայաստանի մշակութային միջավայրում:

2.1 ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Հայաստանի մշակութային ոլորտում առկա կայունության պրակտիկաները գործում են երկու հիմնական մակարդակում՝ անհատական և ինստիտուցիոնալ: Դրանք ի հայտ են գալիս արվեստագետների, համադրողների, ակտիվիստների և մշակութային գործիչների աշխատանքում, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների և հաստատությունների նախաձեռնություններում: Այս պրակտիկաները ծավալվում են երկու հիմնական ուղղություններով: Մի կողմից, դրանք թեմատիկ են. անդրադառնում են կայունությանը գեղարվեստական բովանդակության միջոցով՝ նպատակ ունենալով բարձրացնել հանրային իրազեկությունը շրջակա միջավայրի մարտահրավերների վերաբերյալ: Մյուս կողմից, դրանք գործնական են, արտացոլվում են արտադրության մեթոդներում, նյութերի ընտրության մեջ, ռեսուրսների կառավարման մեջ և ինստիտուցիոնալ ընթացակարգերում, որոնք ձգտում են նվազեցնել մշակութային աշխատանքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

2.1.1 Անկախ մշակութային հաստատությունների և դերակատարների՝ կայունությանն ուղղված ջանքերը

«Կանաչ Հայաստան» հետազոտության շրջանակներում անցկացված քարտեզագրումն ի հայտ է բերում մշակութային գործիչների որոշակի շրջանակ, որոնք զբաղվում են բնապահպանական և կլիմայական խնդիրների հանրահռչակմամբ՝ ցուցահանդեսների, ֆիլմերի, փառատոների, կացության ծրագրերի, ինստալյացիաների և մասնակցային նախագծերի միջոցով: Այս նախաձեռնություններն արտացոլում են էկոլոգիական թեմաների աստիճանական, բայց նկատելի ընդլայնումը Հայաստանի ժամանակակից մշակութային ոլորտում: Չնայած ձևաչափերի, մասշտաբների և ժամկետների զանազանությանը՝ դրանց ամբողջականությունն արտացոլում է կայունության վերաբերյալ աճող մտահոգությունները գեղարվեստական, համադրողական և համայնքային պրակտիկաներում:

Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան | CSN Lab-ը Հայաստանում գործող այն սակավ մշակութային կազմակերպություններից է, որտեղ բնապահպանական հիմնահարցերը աշխատանքի կենտրոնական օրակարգ են և ռազմավարական ուղղություն: CSN Lab-ը մշակել և հրապարակել է բազմաթիվ միջգիտակարգային հետազոտական նախագծեր, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի և քաղաքային փոխակերպումներին,[24] շրջակա միջավայրի գաղութացմանը, էկոմիգրացիային և ջրային ռեսուրսների կառավարմանը[25]: Լաբորատորիան նաև նախաձեռնել է ցուցահանդեսներ և բազմաթիվ այլ հանրային ծրագրեր, որոնք ուղղված են մշակույթի և շրջակա միջավայրի փոխհատմանը և հանրային իրազեկության բարձրացմանը[26]: Ավելին, CSN Lab-ը կազմակերպում է այլընտրանքային կրթական ծրագրեր, ինչպիսին է Բարդ անցյալի դպրոցը,[27] որի համատեքստում միջավայրային հիմնահարցերն առանցքային են:

Բնապահպանական փոփոխությունների և դրանց մշակութային ու սոցիալական ազդեցության վերլուծությունից զատ՝ այս նախագծերի զգալի մասն ուղղված է բնության պահպանությանը: Բազմաթիվ արվեստագետների մասնակցությամբ մի շարք ցուցահանդեսներ առաջնային են դարձրել բնական լանդշաֆտի պաշտպանության, անտառների վերականգնման և կենսաբազմազանության

24 Ամիրյան Տ., Գալստյան Հ., խմբ. «Գետառ. գետի հիշողությունը». Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա (CSN Lab), 2023:

25 Ամիրյան Տ., Աբրահամյան Ա. «Կեչուտ. հիշողություն ջրի հատակին». Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա (CSN Lab), 2023:

26 Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա (CSN Lab). «Կապույտ Երևան» միջգիտակարգային հետազոտական նախագիծ և ցուցադրություն. 2026. Տե՛ս https://csnlab.net/am/article/blueyerevan, [հասանելի է 03.04.2026-ի դրությամբ]:

27 Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա (CSN Lab). «Բարդ անցյալի դպրոց» ամենամյա այլընտրանքային կրթական ծրագիր («Հիշողության ակտիվիզմից դեպի կլիմայական արդարություն»). 2026. Տե՛ս https://csnlab.net/article/scop25, [հասանելի է 03.02.2026-ի դրությամբ]:

կորստի թեմաները: Ինչպես օրինակ՝ AHA Collective-ի համակարգմամբ իրականացված «Մենք ենք՝ մեր անտառները» ցուցահանդեսը, որ միավորել էր տասնհինգ արվեստագետի, բարձրաձայնում էր անտառային էկոհամակարգերի խնդիրները և անտառահատումների էկոլոգիական հետևանքներն ամբողջ Հայաստանում[28]: Նման ձևաչափերը տեղակայում են բնապահպանական մտահոգությունները հանրային մշակութային տարածքներում և բնության պահպանության շուրջ խոսույթը՝ ժամանակակից գեղարվեստական գործունեությունում:

Տեղական մշակութային դաշտում կան նաև եզակի օրինակներ, որտեղ փոխհատվում են արվեստն ու բնապահպանական կրթությունը՝ նպատակ ունենալով ներգրավել հանդիսատեսին: Նման օրինակներից է Հարություն Թումաղյանի «Սևանիկ» ֆիլմը, որ պատմասանության միջոցով անդրադառնում է Սևանա լճի էկոլոգիական խոցելիությանը և լճի կենսաբազմազանության վրա աղտոտվածության ազդեցությանը[29]: Համադրելով գեղարվեստական արտահայտումն ու բնապահպանական իրազեկումը՝ ֆիլմը հասանելի և գրավիչ լեզվով ներկայացնում է արդի էկոլոգիական մարտահրավերներն ու մտահոգությունները, ներգրավելով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին: Նմանապես, բնապահպանական կինոյին նվիրված կարևոր և պարբերական հարթակ է դարձել «Արևորդի» փառատոնը[30]: Որպես Հարավային Կովկասի բնապահպանական ֆիլմերի միակ փառատոն՝ այն միավորում է կինոգործիչներին, արվեստագետներին և հանդիսատեսին՝ ցուցադրությունների

28 AHA Collective. *«Մենք ենք՝ մեր անտառները» ազդագրերի բացօթյա ցուցահանդես*. Երևան, Հայաստան, 2024 թ. մարտի 21 – մայիսի 20: Տե՛ս https://aha.am/westandwithforests/, [հասանելի է 10 . 02 . 2026-ի դրությամբ]:

29 Թումաղյան Հ., ռեժ., Օհանյան Ա., սցեն. «Սևանիկ» [կարճամետրաժ անիմացիոն ֆիլմ]. ՕևՕ$$ Ստուդիա ՍՊԸ, ՀՀ ԿԳՍՍՆ, Հայաստանի ազգային կինոկենտրոն, Յունիսե$ Հայաստան, 2023: Տե՛ս https://ncca.am/hy/films/920-sevanik, [հասանելի է 08 . 02 . 2026-ի դրությամբ]:

30 «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոն. Տե՛ս https://sunchild.am/, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

և քննարկումների միջոցով անդրադառնալու կենսաբազմազանության կորստին, աղտոտվածությանը և համայնքային պատասխանատվությանը:

Ներկայացուցչական ներգրավումից բացի՝ մի շարք նախաձեռնություններ որդեգրում են նաև մասնակցային մոտեցումներ: Վերջին տարիներին կացության ու փառատոնային ծրագրերի թեմատիկ հետաքրքրության ծիրում էկոլոգիական խնդիրներն ավելի ու ավելի կարևոր են դառնում: Օրինակ՝ Վանաձորի «Պարփակված այգի» (TEG) փառատոնի շրջանակներում[31] իրականացված էկո-ֆեմինիստական կացության ծրագիրը միավորեց արվեստագետների Հայաստանից և արտերկրից՝ նպատակ ունենալով կատարողական և հավաքական հետազոտական գործունեության միջոցով ուսումնասիրել էկոլոգիական մտահոգությունները: Նմանատիպ թեմատիկ ուղղություն էր կրում նաև Գյումրու ART-շաբաթը, որտեղ էկոլոգիական և բնապահպանական հարցերի շուրջ էր կառուցվում համադրողական ծրագիրը և գեղարվեստական արտադրությունը[32]:

Ինտերակտիվ ինստալյացիաները նույնպես ցուցադրում են այս հետզհետե ամրացող միջգիտակարգային մոտեցումը: Սեդա Գրիգորյանի «Մարող շշուկները», որ կառուցված էր Երևանից հավաքված հատված ծառերի ճյուղերից, ներգրավում է լսարանին ձայնային արձագանքի բազմապատկման միջոցով[33]: Շոշափելիս հատված ճյուղերը արձակում են շերտավոր ձայներ՝ ուշադրությունը սևեռելով քաղաքային ծառահատման հետևանքներին և հանրային տարածքների այլափոխությանը: Նման աշխատանքները շրջակա միջավայրի խոսույթը տեղափոխում են վերացական

31 «Պարփակված այգի» 5-րդ փառատոն, 2026: Տե՛ս https://www.instagram.com/teg_festival/, [հասանելի է 03 . 02 . 2026-ի դրությամբ]:

32 CYLAND Media ArtLab. “4th Gyumri Art Week / Ecology & Environment”, 2025. Տե՛ս https://www.cyland.org/news/4th-gyumri-art-week-ecology-environment, [հասանելի է 20 . 02 . 2026-ի դրությամբ]:

33 Grigoryan, S. “Fading Whispers” . Hosq, 2025. Տե՛ս https://www.facebook.com/share/r/182aiPc9S5/, [հասանելի է 21 . 02 . 2026-ի դրությամբ]:

ներկայացումից դեպի զգայական և փորձառական ներգրավում:

Այս և մի շարք այլ գեղարվեստական նախաձեռնություններին զուգահեռ, հետազոտությունը նաև արձանագրում է հակադարձ դինամիկան. դրվագներ, երբ մշակույթը դառնում է բնապահպանական ակտիվիզմի համար հաղորդակցական և մոբիլիզացնող միջոց: Հայաստանում բնապահպանական շարժումները հաճախ են ապավինել գեղարվեստական ձևերին, ներկայացումներին,[34] վիզուալ ինտերվենցիաներին,[35] փառատոններին[36] և այլ մասնակցային ձևաչափերին՝ ապահովելու համար համայնքների ներգրավվածությունն ու բարձրաձայնվող խնդիրների տեսանելիությունը:

Հատկապես Ամուլսարի,[37] Թռչկանի,[38] Թեղուտի[39] և Երևանի քաղաքային կանաչ տարածքների շուրջ խմորված շարժումները դիրքավորել են մշակութային պրակտիկաները որպես շրջակա միջավայրի պաշտպանության ռազմավարությունների մաս: 2012 թվականի Մաշտոցի պուրակի շարժումն ակնառու օրինակ է[40]: Հանրային կանաչ

34 Harutyunyan, A. “Open Getar River in Yerevan!”. Planet One, 2024. Տե՛ս https://planetone.org/blog/open-getar-river-in-yerevan/, [հասանելի է 10 . 03 . 2026-ի դրությամբ]:

35 Հակոբյան Արպա. «Ձայն տալով անձայներին. սթրիթ-արթի ջատագով և շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող ակտիվիստ Րաֆֆի Արտալեճանը՝ «Հայկական մուֆլոն» նախագծի մասին». Հետք, 2020: Տե՛ս https://hetq.am/hy/article/118231, [հասանելի է 10 . 03 . 2026-ի դրությամբ]:

36 Green Green. «Spring Ecofest 2025». Տե՛ս https://greengreen.am/hy/ecofest2025, [հասանելի է 10 . 03 . 2026-ի դրությամբ]:

37 Ալեքսանյան Նարեկ. «100 օր Ամուլսարի հետ». ֆոտոցուցահանդես և համերգ». Հետք, 2018: Տե՛ս https://hetq.am/hy/article/93520, [հասանելի է 15 . 03 . 2026-ի դրությամբ]:

38 «Ոռք համերգ և ազգագրական պար՝ ի պաշտպանություն Թռչկանի». Էկոլուր, 2011: Տե՛ս https://www.ecolur.org/hy/news/water/3187/, [հասանելի է 15 . 03 . 2026-ի դրությամբ]:

39 «Ոռք համերգ Թեղուտի պաշտպանության համար». Էկոլուր, 2009: Տե՛ս https://www.ecolur.org/hy/news/nuclear-energy/215/, [հասանելի է 15 . 03 . 2026-ի դրությամբ]:

40 Սարգսյան Ժաննա. «Համերգների նոր փուլ՝ ի աջակցություն Սաշտոցի այգու համար պայքարողների». Հետք, 2012: Տե՛ս https://hetq.am/hy/article/13155, [հասանելի է 15 . 03 . 2026-ի դրությամբ]:

տարածքն առևտրայնացնելու ծրագրերին ի պատասխան քաղաքացիական ակտիվիստները կազմակերպեցին երկարատև նստացույց: Արվեստագետներն ու մշակութային գործիչներն իրենց ներդրումն ունեցան երաժշտական ներկայացումների, հանրային ընթերցումների և արվեստային ինտերվենցիաների միջոցով, որոնք բողոքի ցույցի վայրը վերածեցին հավաքական պայքարի մշակութային տարածքի: Այս համատեքստում արվեստը գործում էր ոչ միայն որպես ներկայացուցչություն, այլև որպես մարտավարական և հաղորդակցական գործիք:

Մշակույթի և ակտիվիզմի միջև այս երկխոսությունը շարունակում է իր ընթացքը մինչ օրս: Անի Խաչատրյանը, ով տարիներ շարունակ ներգրավված է բնապահպանական ակտիվիզմում, ինչպես նաև Հայկական բնապահպանական ճակատի ակտիվ անդամներից է, մշտապես ընդգծել է շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված շարժումների և մշակութային գործիչների միջև համագործակցության կարևորությունը: Առաջնորդելով մի շարք բնապահպանական նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ Երևանի «վեգան փառատոնը»[41] (2013–2017)՝ Անի Խաչատրյանը և բազմաթիվ այլ բնապահպաններ միավորել են էկոլոգիական իրազեկությունը, կենսակերպի վերափոխումը և մշակույթը: Այս նախաձեռնությունները խթանել են բնության նկատմամբ գիտակից գործելակերպը՝ միաժամանակ աջակցելով համայնքի մասնակցությանը և ստեղծագործական ներգրավմանը:

Թեմատիկ ներգրավումից բացի՝ հետազոտությունը բացահայտում է այն մեթոդաբանական փոփոխությունները, որոնք ներառում են կայուն մոտեցումները գեղարվեստական և ինստիտուցիոնալ գործունեության մեջ: Մշակութային գործիչները ոչ միայն բարձրաձայնում և հասցեագրում են բնապահպանական հիմնահարցերը, այլև վերանայում են արտադրական գործընթացները, նյութերի ընտրությունը, ռեսուրսների օգտագործումը և շարժունության եղանակները[42]:

41 ecokayan.com. “Vegan Fest Yerevan – Choose the Life”. Տե՛ս https://www.ecokayan.com/armenia/travel/explore/vegan-fest-yerevan, [հասանելի է 16 . 03 . 2026-ի դրությամբ]:

42 Chobanyan, K. “Armenian recycled art: Imagine there’s no garbage”. EVN Report, 2020: Տե՛ս https://evnre-

Մասնավորապես նյութերի վերօգտագործումը մի շարք մշակութային հաստատությունների կողմից վերածվել է շարունակական պրակտիկայի: Նորարար փորձառական արվեստի կենտրոնի (ՆՓԱԿ) բազմաթիվ ցուցահանդեսներում թափոնները և վերամշակված աղբն օգտագործվում են որպես նյութական միջոց և ստեղծագործության հայեցակարգային շրջանակ: Ինչպես օրինակ՝ Լանա Լայնի «Մենք» աշխատանքը, որն ամբողջությամբ կազմված է թափոններից, ուսումնասիրում է անհատների, հասարակության և շրջակա միջավայրի միջև հարաբերությունների էկոլոգիան՝ նյութական փոխակերպման միջոցով[43]: Ինստալյացիան արտացոլում է թափոնների տեսանելի և անտեսանելի շերտերը, որոնք ներթափանցել են քաղաքային առօրյա, մասնավորապես՝ Երևանում:

Նմանապես, Կարեն Բարսեղյանի «Second Hand» ցուցահանդեսը, որը ներկայացված էր «Արևորդի» փառատոնի շրջանակներում, իր գեղարվեստական արտադրության մեջ ներառում է վերօգտագործված առարկաներ և տեքստիլ նյութեր[44]: Թափոնների հետ անմիջական շփման միջոցով ցուցահանդեսն անդրադառնում է սպառմանը, աղտոտվածությանը և շրջակա միջավայրի անտեսմանը ոչ միայն խորհրդանշական, այլև նյութական տեսանկյունից: Մեկ այլ համադրական մոտեցմամբ, Էդգար Ամրոյանի կողմից համադրված «Polyfonia» նախագիծը թափոնները դիտարկում է որպես գեղագիտական նյութ՝ առաջ բերելով մտորումներ աղտոտվածության և աղբի մնացորդների միջև լարվածության, հակասության և ներդաշնակության մասին[45]:

---

port.com/arts-and-culture/armenian-recycled-art-imagine-theres-no-garbage/, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

43 Լայն Լանա. «Մենք». «Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն» (ՆՓԱԿ), 2025: Տե՛ս https://www.accea.info/hy/մենք/, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

44 Բարսեղյան Կարեն. «Սեքընդ հենդ». «Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն» (ՆՓԱԿ), 2017: Տե՛ս https://www.accea.info/hy/սեքընդ-հենդ/, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

45 Ամրոյան Էդգար. «Պոլիֆոնիա». «Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն» (ՆՓԱԿ), 2021: Տե՛ս https://www.accea.info/hy/պոլիֆոնիա/, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

Այսօրինակ մոտեցումներն ավելի են ընդլայնվում մասնակցային ձևաչափերի միջոցով: ARE մշակութային կազմակերպության «Junk Art» նախաձեռնությունը խրախուսում է արվեստագետներին և ուսանողներին միայն թափոնների համադրմամբ ստեղծել քանդակներ և արվեստի այլ գործեր[46]: Արվեստային փորձարկումները հանրային ներգրավման հետ միավորելով՝ նման նախաձեռնությունները վերածում են միջավայրային իրազեկությունը հավաքական ստեղծագործական գործունեության:

Ընդհանուր առմամբ, նախաձեռնությունների այս աճող թիվը ցույց է տալիս, որ մշակութային ոլորտում կայունությունը գործում է բազմաթիվ ուղղություններով. որպես թեմատիկ ներգրավում, որպես նյութերի և արտադրական գործունեության մեթոդաբանություն, և ի վերջո, բնապահպանական ակտիվիզմի համատեքստում, որպես համայնքների ներգրավման հաղորդակցական միջոց: Այնուամենայնիվ, այս բոլոր ջանքերում նկատելի է ընդհանուր կառուցվածքային խնդիր: Այս գործունեության մեծ մասը խթանվում է անկախ արվեստագետների, փոքր թիմերի, համայնքային նախաձեռնությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Երկարաժամկետ էկոլոգիական մշակութային արտադրությանը կամ մշակույթի և բնապահպանական ոլորտների միջև կառուցվածքային համագործակցությանը աջակցող ինստիտուցիոնալ շրջանակները մնում են սահմանափակ: Արդյունքում, արդեն իսկ նշմարվող հաջող փորձառությունը հաճախ կախված է նախագծային ֆինանսավորումից, անհատական նվիրումից և ոչ պաշտոնական ցանցերից և ունի համակարգային քաղաքականության ներդրման և աջակցության կարիք:

46 ARé Cultural Foundation. “Junk Art”. Տե՛ս https://are-foundation.com/en/junk-art, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

2.1.2 Կայունությանն ուղղված ջանքերը պետական մշակութային հաստատություններում

Ի տարբերություն վերոբերյալ էկոլոգիական ներգրավման (հիմնականում անկախ և նախագծահեն)՝ պետական մշակութային հաստատությունների կայունության ջանքերը ներկայացնում են ավելի բարդ և անհավասար պատկեր: Չնայած ՀՀ 2023–2027 թվականների մշակութային զարգացման ռազմավարությունը հստակորեն առաջնահերթություն չի տալիս կամ կառուցվածքային առումով չի ներառում կայունությունը մշակութային զարգացման շրջանակներում,[47] այնուամենայնիվ, առանձին պետական մշակութային հաստատություններ նախաձեռնում են միջոցառումներ, որոնք արտացոլում են միջավայրային իրազեկությունը և ռեսուրսների գիտակից կառավարումը: Այս նախաձեռնությունները, սակայն, սովորաբար, երևան են գալիս մշակույթի համար համակարգված ազգային կայունության օրակարգի բացակայության պայմաններում և հաճախ մասնատված են, իրականացվում են արտաքին աջակցությամբ կամ կախված են անհատական առաջնորդությունից, և ներառված չեն համակարգված քաղաքականության մեխանիզմներում:

Որոշ պետական հաստատություններ ձեռնարկել են ենթակառուցվածքային բարելավումներ, որոնք անմիջականորեն անդրադառնում են էներգաարդյունավետությանը և բնապահպանական պատասխանատվությանը: Օրինակ՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը և Հովհաննես Թումանյանի թանգարանը[48] մասնակիորեն անցել են արևային էներգիայի

47 Հայաստանի Հանրապետության կառավարություն. «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023–2027 թվականների ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին». ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1951-Լ որոշում: Տե՛ս https://www.arlis.am/hy/acts/185185, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

48 «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ. «Արևային էներգիան ի շահ մշակութային ժառանգության» ծրագրի մեկնարկի պաշտոնական արարողություն, 2022: Տե՛ս https://energyagency.am/category/noroutyounner-ev-mijocaroumner/-areva-

օգտագործմանը: Նմանապես, Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի կողմից Եվրոպական միության LIVEMX ծրագրի միջոցով իրականացվող «Ռեզոնանս» նախագիծը[49] ներկայացնում է կայունության նկատմամբ ավելի լայն ինստիտուցիոնալ մոտեցում: Նախաձեռնությունը ձգտում է արդիականացնել համերգասրահների տեխնիկական ենթակառուցվածքները՝ միաժամանակ ներդնելով էկոլոգիական նկատառումները գեղարվեստական ծրագրերում, ինստիտուցիոնալ կառավարման և հանդիսատեսի ներգրավման գործընթացում: Եվրոպական գործընկերների հետ փոխանակման և կացության ծրագրերի, ինչպես նաև համագործակցային ներկայացումների միջոցով «Ռեզոնանս» ծրագիրը կայունությունը ներկայացնում է որպես գործառնական և թեմատիկ մտահոգություն երաժշտական հաստատություններում: Դրա ազդեցությունը տարածվում է մեկ կազմակերպությունից անդին և ներառում բազմաթիվ հաստատություններ ամբողջ Հայաստանում՝ ի ցույց դնելով, թե ինչպես կարող են արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերը խթանել ինստիտուցիոնալ փոփոխություններ:

Այնուամենայնիվ, այս օրինակները նաև բացահայտում են կառուցվածքային օրինաչափություն. պետական հաստատությունների ներսում կայունության նախաձեռնությունները հաճախ հնարավոր են դառնում արտաքին ֆինանսավորման կամ միջազգային գործընկերությունների շնորհիվ: Երբ նման աջակցությունը բացակայում է, հաստատությունները ստիպված են ապավինել ներքին կարողություններին՝ հաճախ բախվելով ֆինանսական սահմանափակումների: Հայաստանի Ազգային գրադարանի (ՀԱԳ) նախորդ տարիների փորձառությունը մանրամասն կերպով ներկայացնում է, թե որքան

---

yin-energian-i-shah-mshakoutayin-zhara-am, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

49 ANM Media. «Հայաստանի պետական ֆիլհարմոնիան՝ ԵՄ LIVEMX ծրագրի դրամաշնորհային շահառու». 2 հուլիսի, 2025 թ.: Տե՛ս https://anmmedia.am/hy/news/state-philharmonia-of-armenia-has-been-selected-as-a-grant-beneficiary-of-the-eu-program/1177, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

դժվարիրագործելի է կայունության ռազմավարությունը այս սահմանափակումների պայմաններում: Ինչպես տնօրեն Աննա Չուլյանն է ընդգծում.

«Գրադարանի կանաչ ռազմավարությունը կարող է գործել միայն այն դեպքում, եթե նմանատիպ օրակարգ գործի ամբողջ երկրում: Այն միայն մեկ կամ երկու գրադարաններով իրականացնելը պարզապես իրագործելի չէ»:

Ազգային սահմանափակ համակարգման այս համատեքստում ՀԱԳ-ը ձեռնարկել է մի շարք աստիճանական, բայց հստակ միջոցառումներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում հաստատությունը հայտնում է ջրի և էլեկտրաէներգիայի սպառման կրճատման մասին՝ ենթակառուցվածքների արդիականացման, ինչպես նաև անձնակազմի և այցելուների շրջանում ռեսուրսների նկատմամբ գիտակից վարքագծի համակարգված խրախուսման միջոցով: Վերելակների օգտագործումը նվազագույնի հասցնելը և լուսավորության անջատումը, երբ լույսն անհրաժեշտ չէ, դիտարկվում են ոչ թե որպես խորհրդանշական ժեստեր, այլ որպես շարունակական գործառնական գործելակերպ, որը պահանջում է շարունակական ուշադրություն: Ինչպես բացատրում է Չուլյանը.

«Մենք աշխատում ենք արմատավորել այնպիսի սովորություններ, որոնք խնայում են ռեսուրսները, նույնիսկ մանրուքներում»:

Չնայած այս նվաճումների՝ գրադարանի կայուն պրակտիկաներն ընդլայնելու կամ ինստիտուցիոնալացնելու կարողությունը բախվում է պետությանն առընթեր, ոչ առևտրային հաստատություններին բնորոշ կառուցվածքային սահմանափակումներին: Մշտական թերֆինանսավորումը, անձնակազմի ցածր աշխատավարձերը և մասնագիտացված

մարդկային ռեսուրսների բացակայությունը սահմանափակում են մեծածավալ ենթակառուցվածքների, ինչպիսիք են արևային էներգիայի կամ շինության էներգետիկ կառավարման համակարգերի ներդրման հնարավորությունը: Նույնիսկ այն դեպքերում, երբ կան առաջադեմ լուծումների առաջարկներ, ինչպիսիք են, օրինակ, արևային վահանակները, նախնական բարձր ծախսերը և վճարման երկար ժամկետները զգալի խոչընդոտներ են ներկայացնում:

Այս կառուցվածքային սահմանափակումների պայմաններում թվայնացումը դարձել է հիմնական ուղղությունը, որի միջոցով պետական մշակութային հաստատությունները փորձում են համապատասխանեցնել իրենց աշխատանքը կայունության նպատակներին: Բնապահպանական նկատառումներից բացի՝ հավաքածուների թվայնացման գործընթացը ծառայում է բազմաթիվ փոխկապակցված թիրախների իրականացմանը. մշակութային ժառանգության պաշտպանություն, նյութերի օգտագործման կրճատում, հանրային հասանելիության ընդլայնում և տարածական օգտագործման օպտիմալացում, միաժամանակ նվազագույնի հասցնելով գրադարանի գործունեության միջավայրային ազդեցության որոշակի կողմեր:

Ըստ Աննա Չուլյանի՝ ՀԱԳ-ն ակտիվորեն իրականացրել է թվայնացման նախագծեր՝ ոչ միայն հազվագյուտ և խոցելի հավաքածուները պահպանելու, այլև հայկական մշակութային գիտելիքների հետ կապն ընդլայնելու համար: Չնայած սահմանափակ ֆինանսական և մարդկային ռեսուրսներին՝ հաստատությունն օգտագործել է նորարարական և բաց աղբյուրով (open-source) թվային լուծումներ՝ Գրադարանի ծրագրերը հանրահռչակելու նպատակով:

Հայաստանի Ազգային գրադարանում թվայնացման գործընթացը նաև ցույց է տալիս, թե ինչպես կարելի է կայունությանը մոտենալ մեթոդաբանորեն, և ոչ միայն ենթակառուցվածքային դիտանկյունից: Թվային արխիվներ ստեղծելով՝ գրադարանը նվազեցնում է նուրբ նյութերի հետ հաճախակի ֆիզիկական շփում հաստատելու անհրաժեշտությունը, դրանով իսկ նվազեցնելով մաշվածությունը, սահմանափակելով մշակման հետ կապված ռեսուրսների օգտագործումը և բարելավելով երկարաժամկետ

պահպանումը: Միևնույն ժամանակ, թվայնացումն ընդլայնում է հասանելիությունը գրադարանի ֆիզիկական շենքից անդին՝ այսպիսով թույլ տալով հանրության ավելի լայն ներգրավում՝ առանց ֆիզիկական ենթակառուցվածքների ընդլայնման անհրաժեշտության:

Ավելին, այս նախաձեռնությունը Հայաստանը դարձրել է միջազգային թվայնացման ցանցերի նշանակալի դերակատար: Համաշխարհային գիտաժողովներին, համաժողովներին և համագործակցային հարթակներին մասնակցելով՝ ՀԱԳ-ը կիսվել է բարդ և մաշված հավաքածուների թվայնացման փորձով, այդ թվում՝ գրաբար և միջին հայերեն ձեռագրերով: Ինչպես նշում է Չուլյանը, այս ներդրումները միջազգային ճանաչում են ստացել՝ ցույց տալով, թե ինչպես սահմանափակ պայմաններում գործող փոքր հաստատությունները, այնուամենայնիվ, կարող են զարգացնել համաշխարհային ժառանգության ենթակառուցվածքները:

Հաստատությունների կայուն պրակտիկաները թվայնացման միջոցով զարգացնելու մեկ այլ օրինակ է «Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի» (Մատենադարան) փորձը: Գրեթե երկու տասնամյակ էլեկտրոնային հարթակների ստեղծման և ձեռագրերի համակարգված թվայնացման միջոցով Մատենադարանն աջակցել է հետազոտական ջանքերին: Ըստ նոր տեխնոլոգիաների գծով տնօրենի խորհրդական Գուրգեն Գասպարյանի՝ 2007 թվականից ի վեր ինստիտուտում պահվող 13,000 հայկական ձեռագրերից մոտ 8,000-ը թվայնացվել և դարձել են հանրությանը հասանելի[50]: Ինստիտուտը համատեղում է կառավարության աջակցությունը և մասնավոր նվիրատվությունները՝ իր թվայնացման բաժինը հագեցնելու ժամանակակից սկաներներով և ծրագրային ապահովմամբ, որոնք ստեղծում են ձեռագրերի բարձրորակ պատկերներ: 2026 թվականի

50 Նազարյան Հրայր. «Հաջորդ տարվա սկզբին նախատեսվում է գործարկել աշխարհում հայոնի հայերեն բոլոր ձեռագրերը ներկայացնող հարթակ». Արմենպրես, 2025: Տե՛ս https://armenpress.am/hy/article/1225140, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

սկզբին գործարկված նոր էլեկտրոնային հարթակը նպատակ ունի ամբողջ աշխարհում հայտնի գրեթե բոլոր հայկական ձեռագրերը՝ մոտավորապես 35,000-ից 40,000, միավորել միասնական առցանց հարթակում՝ ապահովելով արագ հասանելիություն հետազոտողների և հանրության համար:

Մատենադարանի և Հայաստանի ազգային գրադարանի հետ մեկտեղ՝ Հայաստանի ազգային պատկերասրահը նույնպես ձեռնարկել է իր հավաքածուների լայնածավալ թվայնացում[51]: Այս զարգացումներն արտացոլում են թվային պահպանման, հասանելիության և տարածման նկատմամբ ինստիտուցիոնալ ուշադրության աճը՝ որպես ժամանակակից մշակութային կառավարման հիմնական բաղադրիչներ:

Թվայնացումը, թեպետ ներկայացնում է հստակ առավելություններ, այն նաև լուրջ հակասություններ է բերում կանաչ անցման համատեքստ: Թվայնացումը հնարավորություն է տալիս կրճատել թղթի սպառումը, բարելավել հասանելիությունը և գիտելիքների պահպանումը: Այնուամենայնիվ, այն միաժամանակ մեծացնում է էներգետիկ ենթակառուցվածքներից կախվածությունը, ներառյալ սերվերները, սառեցման համակարգերը և տվյալների երկարաժամկետ պահպանման տեխնոլոգիաները: Այս պահանջները զգալիորեն աճում են արխիվային կառավարման, հետազոտական թվային հարթակների և քարտացուցակների դասակարգման համակարգերում արհեստական բանականության (ԱԲ) գործիքների ներդրմանը զուգընթաց: ԱԲ-ով աշխատող գործիքները, միաժամանակ բարելավելով արդյունավետությունը և որոնելիությունը, հաճախ պահանջում են շարունակական ռեսուրսներ, ավելացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության շերտեր, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծերի պլանավորման ժամանակ[52]:

---

51 Galstyan, V. “Memory Back-Up: The Security of Armenia’s Cultural Patrimony in Time of (Perennial) War”. EVN Report, 2022: Տե՛ս https://evnreport.com/magazine-issues/memory-back-up-the-security-of-armenias-cultural-patrimony-in-time-of-perennial-war/, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

52 Gailhofer, P., et al. “The role of artificial intelligence in the European Green Deal (Study for the Special Commit-

Այս հակասությունն արտացոլում են նաև եվրոպական քաղաքականությունում ընթացող բանավեճերը[53]: Եվրոպական կանաչ գործարքը թվային նորարարությունը և կլիմայական չեզոքությունը ներկայացնում է որպես կանաչ անցման փոխադարձաբար ամրապնդող հենասյուներ, որոնք հաճախ արտահայտվում են «երկվորյակ անցման» (twin transition) հայեցակարգի միջոցով: Թվային տեխնոլոգիաները տեղակայվում են որպես էներգաարդյունավետությունը բարձրացնելու, ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու և ոլորտներում կայուն վերափոխումը արագացնելու գործիքներ: Այնուամենայնիվ, քննադատները զգուշացնում են, որ թվային գործիքները որպես բնույթով կայուն ներկայացնելը ռիսկ է առաջացնում արտաքնացնել դրանց բնապահպանական ծախսերը, ներառյալ էներգիայի սպառումը, էլեկտրոնային թափոնների և ռեսուրսների արդյունահանումը, և ոչ թե դրանք ներառել կայունության համալիր պլանավորման մեջ[54]:

Հայկական մշակութային հաստատությունների համար այս երկվությունը ներկայացնում է քաղաքականության անհետաձգելի մարտահրավեր: Թվային կայունությունը պահանջում է երկարաժամկետ ռազմավարական պլանավորում, որը կնպաստի էներգաարդյունավետության բարձրացմանը, ենթակառուցվածքների դիմակայունության և սպասարկման կարողությունների բարելավմանը, ինչպես նաև կնվազեցնի շահագործման ազդեցությունը շրջակա

---

tee on Artificial Intelligence in a Digital Age [AIDA])". Policy Department for Economic, Scientific and Quality of Life Policies, European Parliament, 2021: Տե՛ս https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2021/662906/IPOL_STU(2021)662906_EN.pdf, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

53 Aloisi, A. "The EU's twin green and digital transitions: a policy revolution, or just Euro-jargon?". The Conversation, 2025: Տե՛ս https://theconversation.com/the-eus-twin-green-and-digital-transitions-a-policy-revolution-or-just-euro-jargon-250459, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

54 Epress.am. «ՎԲ կենտրոնը հրազդանում կբացվի առանց բնապահպանական փորձաքննությունների». 2025: Տե՛ս https://epress.am/2025/12/15/ai-center-skips-environmental-checks.html, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

միջավայրի վրա: Համակարգային մոտեցման և կայուն ներդրումների բացակայության դեպքում թվայնացման նախաձեռնությունները, որքան էլ առաջադեմ լինեն, կարող են սրել միջավայրային ռիսկերը, մասնավորապես այն պարագայում, երբ արհեստական բանականության ներդրումը արագանում է համապատասխան էներգետիկ կառավարման շրջանակների բացակայությամբ:

Ընդհանուր առմամբ, այս զարգացումներն ընդգծում են թվային փոխակերպմանը և արհեստական բանականությանը՝ և՛ մշակութային, և՛ բնապահպանական ոլորտներում անդրադառնալու համար անհրաժեշտ հետևողական քաղաքականության շրջանակի անհրաժեշտությունը: Նման շրջանակը պետք է հաշվի առնի թվային ենթակառուցվածքների բնապահպանական ծախսերը, պաշտպանի մշակութային և մտավոր իրավունքները և ապահովի, որ տեխնոլոգիական նորարարությունը համապատասխանի ավելի լայն կայունության, արդարության և հանրային շահերի նպատակներին:

2.2 ՀԱՍԱԿԱՐԳԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ, ՓՈԽՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՑԵՐ

Քաղաքականության քննարկումները, ինստիտուցիոնալ պրակտիկաները և փորձագիտական տեսակետները համադրելիս առաջ է գալիս կրկնվող օրինաչափություն՝ սահմանափակ միջոլորտային համագործակցություն, իսկ հաճախ՝ դրա լիակատար բացակայություն, մասնավորապես մշակույթի և բնապահպանության փոխհատման կետում: Հաստատությունների ներկայացուցիչների հետ թիրախային քննարկումները և խորքային հարցազրույցները ցույց են տալիս, որ Հայաստանի պետական կառույցներում այս ոլորտները դիտարկվում են որպես վարչական և հայեցակարգային առումով մեկուսացված, ինչը հանգեցնում է նվազագույն երկխոսության, համակարգման կամ համատեղ ռազմավարական պլանավորման: Այս տարանջատումը միայն ընթացակարգային չէ. այն արտացոլում է ավելի խորը կառուցվածքային օրինաչափություններ, որոնք

սահմանափակում են ներդրված մոտեցումների ստեղծումը: Գործնականում սակավ պաշտոնական մեխանիզմներ, հարթակներ կամ ինստիտուցիոնալ հետադարձ կապի օղակներ են հնարավորություն տալիս կատարել կայուն միջոլորտային աշխատանք: Արդյունքում, համատեղ ստեղծված նախաձեռնությունների, ծրագրավորման և քաղաքականության մշակման հնարավորությունները մեծ մասամբ մնում են չիրացված:

Հետևաբար, հասկանալու համար, թե ինչպես են մշակութային և բնապահպանական օրակարգերը փոխհատվում Հայաստանի կառավարման համակարգում, անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես են հիմնական նախարարությունները սահմանում իրենց լիազորությունները և համագործակցում միմյանց հետ: Թեմայի համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում երկու հաստատությունների՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (ԿԳՄՍՆ) և Շրջակա միջավայրի նախարարությանը (ՇՄՆ): ԿԳՄՍՆ ներկայացուցիչների հետ երկխոսությունը, ինչպես նաև Շրջակա միջավայրի նախարարության հետ հաճախ համագործակցող անկախ փորձագետների տեսակետները բացահայտում են համակարգային ինստիտուցիոնալ մասնատում, որը խոչընդոտում է մշակութային-բնապահպանական միջոլորտային մոտեցումների զարգացմանը:

Չնայած բազմաթիվ քաղաքականության ոլորտների, որտեղ համագործակցությունը կարող է անհրաժեշտ թվալ, ինչպիսիք են էկոլոգիական կրթությունը, շրջակա միջավայրի ժառանգության պաշտպանությունը կամ համայնքային բնապահպանական ծրագրերը, երկու նախարարությունները մեծ մասամբ գործում են իրենց համապատասխան վարչական սահմաններում: Համագործակցության պաշտոնական մեխանիզմները կա՛մ թույլ են, կա՛մ բացակայում են: Ըստ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի՝ նախարարությունների կողմից մշակված ծրագրերը հաճախ պահանջում են մի քանի նախարարություններից դրական արձագանք՝ առաջ շարժվելու համար: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե որքանով է այս միջգերատեսչական փոխանակումը հանգեցնում միջոլորտային էական

ներգրավման, և ոչ թե ընթացակարգային հաստատման։

Այս մասնատումն ամրապնդվում է նրանով, թե ինչպես է յուրաքանչյուր նախարարություն սահմանում իր լիազորությունների շրջանակը։ Ոչ մի քաղաքականության կառուցվածք չի խրախուսում մշակութային և բնապահպանական կառավարման միջև համակարգված երկխոսությունը։ Այս հետազոտության առանցքային եզրակացություններից մեկը ընդհանուր հայեցակարգային շրջանակի բացակայությունն է. շրջանակ, որն ունակ է կամուրջ դառնալ երկու ոլորտների միջև։ «Մշակույթ», «ժառանգություն», «միջավայր», «բնության ժառանգություն» և «էկոլոգիական գիտակցություն» եզրերն այնպես են գործառնականացվում, որ պահպանում են մասնատումը, և ոչ թե խթանում ներառումը։

ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերում մշակույթը հիմնականում սահմանվում է նյութական և ոչ նյութական ժառանգության միջոցով՝ հուշարձանների պահպանման վրա մեծ շեշտադրմամբ։ Այս նեղ սահմանումը և ընկալումը ստեղծում է հակասություններ Հայաստանի կողմից ընդունված մի քանի համաձայնագրերի և պարտավորությունների հետ՝ ինչպես օրինակ՝ 2004 թվականին ստորագրված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան, որը հստակորեն ճանաչում է բնական լանդշաֆտները, այդ թվում՝ քաղաքային և գյուղական, որպես տեղացիների կյանքի, տեղական մշակույթների, էկոմշակութային սովորույթների և տեղական ինքնության ու բարեկեցության հիմքերի էական բաղադրիչներ[55]։ Կոնվենցիան ընդգծում է լանդշաֆտների մշակութային չափումը և կոչ է անում դրանք ներառել բնապահպանական, մշակութային և տարածական պլանավորման ու զարգացման քաղաքականություններում։ Այնուամենայնիվ, Հայաստանի մշակութային զարգացման ռազմավարությունները համակարգված կերպով չեն ներառել

55 Council of Europe. “European Landscape Convention”. Florence, October 20, 2000 (signed by Armenia in 2004). Տե՛ս https://rm.coe.int/1680080621, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]։

լանդշաֆտային կամ շրջակա միջավայրի վրա հիմնված չափումներ իրենց կառավարման շրջանակներում: Էկո-մշակութային սովորույթները, բնակեցված լանդշաֆտները և համայնքային բնապահպանական գիտելիքները մեծ մասամբ մնում են պաշտոնական մշակութային քաղաքականության առաջնահերթություններից դուրս:

Գործող իրավական շրջանակի համաձայն՝ նախարարության լիազորությունները հիմնականում վերաբերում են այն վայրերին և օբյեկտներին, որոնք պաշտոնապես ճանաչված են որպես հուշարձաններ: Հուշարձանի կարգավիճակը որոշվում է այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են տարիքը և պատմական նշանակությունը: Եթե որևէ կառույց, վայր կամ լանդշաֆտ պաշտոնապես չի ճանաչվում այս դասակարգման համակարգում, դրա քարտեզագրումը, ուսումնասիրությունը և պաշտպանությանն ուղղված միջոցառումները դուրս են մնում նախարարության անմիջական լիազորություններից՝ անկախ դրա ժամանակակից մշակութային կամ բնապահպանական նշանակությունից: Ալֆրեդ Քոչարյանը նշում է.

> *«Ինստիտուցիոնալ միջամտությունը սկսվում է միայն այն ժամանակ, երբ օբյեկտը պաշտոնապես ճանաչվում է մշակութային ժառանգություն, սահմանված չափանիշներին համապատասխան: Այս իրավական սահմանը որոշում է գործողությունների շրջանակը. լանդշաֆտները, բնական տարածքները և էկոմշակութային պրակտիկաները դիտարկվում են միայն այն դեպքում, երբ դրանք ուղղակիորեն կապված են պաշտոնապես ճանաչված մշակութային ժառանգության տարրերի հետ: Բնական միջավայրերը, նույնիսկ երբ մշակութային առումով նշանակալից կամ էկոլոգիապես խոցելի են, մնում են նախարարության իրավասության սահմաններից դուրս»:*

Այս սահմանազատումը բացահայտում է «մշակույթի» սահմանումները ժամանակակից կառավարման մեջ և ավելի լայն հարցեր է առաջ քաշում այն մասին, թե արդյոք նման սահմանումները բավարար են կլիմայական

մարտահրավերները հասցեագրելու և կանաչ անցում ապահովելու համար:

Շրջակա միջավայրի կառավարումը, ընդհակառակը, հիմնականում դիտարկվում է որպես Շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո գտնվող գործառնական և կարգավորող ոլորտ: Թեպետ բազմաթիվ միջազգային բնապահպանական շրջանակներ ավելի ու ավելի են ճանաչում մշակութային սովորույթների, ավանդական գիտելիքների և համայնքային մոտեցումների կարևորությունը բնության պաշտպանության գործում, այս չափորոշիչները մնում են միայն թույլ ներդրված Հայաստանի ազգային ռազմավարություններում և գործնական իրականացման գործընթացներում: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավական խորհրդատու, ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի և «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին» արձանագրության ազգային համակարգող, ինչպես նաև Բույսերի բազմազանության և էկոհամակարգերի ուսումնասիրության ամբիոնի դասախոս Մարի Չաքրյանը նշում է.

> *«Օրինակ, կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան հատուկ շեշտադրում է մշակութային կետերը, ներառյալ էկոմշակութային պրակտիկաները և այն եղանակները, որոնցով համայնքները փոխազդում են որոշակի էկոհամակարգերի հետ և օգտագործում դրանք: Այլ կերպ ասած, այն չի կենտրոնանում միայն տեսակների պահպանման վրա, այլև ավանդույթների, պրակտիկաների, պատմությունների և գիտելիքների համակարգերի վրա: Ավելին, նոր գլոբալ կենսաբազմազանության շրջանակներում դրա չորս գերակա նպատակներից մեկը ընդգծում է, որ մինչև 2030 թվականը և 2050 թվականի հեռանկարում՝ անհրաժեշտ է ֆաստաթղթավորել և պաշտպանել ոչ միայն կենսաբազմազանությունը, այլև համայնքների և տեղաբնիկ ժողովուրդների մշակութային պրակտիկաները, ավանդույթները, կենսակերպը և*

գիտելիքները, ներառյալ նրանց մոտեցումները իրենց շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, դեռևս զգալի մարտահրավերներ են մնում այս միջոլորտային կետերը ազգային կառավարման կառույցներում ներառելու և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ փորձագիտությունն ու ինստիտուցիոնալ կարողություններն ապահովելու հարցում»:

Արդյունքում միջազգային շրջանակների հետ համապատասխանության հարցը վերաձևակերպվում է, և առանցքային է դառնում հարցադրել, թե որքանով են ձևակերպված նպատակները և հանձն առնված պարտավորությունները ներառված ազգային քաղաքականության և գործողությունների ծրագրերում: Հայաստանի կառավարման կառույցներում այն գաղափարը, որ մշակույթն ինքնին պարունակում է էկոլոգիական գիտելիքներ, հարաբերման պրակտիկաներ և շրջակա միջավայրի ու տեղի հիշողություն, պաշտոնապես չի ներդրվել քաղաքականության շրջանակներում: Բնապահպանական քաղաքականությունը հազվադեպ է ներառում մշակութային հիշողությունը կամ համայնքային գործունեությունը՝ որպես էկոլոգիական կառավարման բաղադրիչ տարրեր:

Այս հայեցակարգային բաժանումն ունի ինստիտուցիոնալ հետևանքներ: Այն սահմանափակում է ոչ միայն նախարարությունների միջև համագործակցությունը, այլ նաև դրանց առընթեր հաստատությունների՝ կայունության ավելի լայն նպատակներին սեփական պրակտիկաները համապատասխանեցնելու կարողությունը: Ինչպես ընդգծում է ՀԱԳ տնօրեն Աննա Չուլյանը.

«Մշակութային հաստատությունների կայուն և երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ է պետական մակարդակի ռազմավարություն, որը կուղեկցվի գործողությունների ծրագրերով և քայլ առ քայլ ուղեցույցներով: Ներհատական տեսլականներն ու կայունությանն ուղղված մեկուսացված ջանքերը, ի վերջո, չեն կարողանում համակարգային

փոփոխություններ առաջացնել՝ մասնատման և ինստիտուցիոնալ հյուծման պատճառով»:

Առանց համակարգված ազգային շրջանակի, ինստիտուցիոնալ նախաձեռնությունները մնում են կտրված ավելի լայն մշակութային, կրթական և բնապահպանական քաղաքականության օրակարգերից: Պետական մակարդակի ռազմավարությունը կարող է նպաստել ավելի համակարգված ինտեգրմանը՝ ինչպես գլոբալ պարտավորությունների հետ, այնպես էլ ներքին բնապահպանական առաջնահերթությունների: Այսպիսով, պետական մշակութային հաստատությունների կայունությունը չի կարող լիովին իրականացվել մեկուսացված: Առանց միջոլորտային ազգային ռազմավարության, ինստիտուցիոնալ նախաձեռնությունները, որքան էլ նորարարական լինեն, մնում են մասնատված և դժվար ընդլայնելի:

Կառուցվածքային համագործակցության բացակայությունը տարածվում է պաշտոնական շրջանակներից անդին: Պետական հաստատություններից դուրս, արվեստի և բնապահպանական ակտիվիզմի համակարգված կամուրջ դարձող հարթակները նույնպես մնում են սահմանափակ: Թեպետ բնապահպանական շարժումները ամրապնդելու համար ստեղծագործական ներգրավման ներուժը լայն ճանաչում ունի, համագործակցության կայուն մեխանիզմները հազվադեպ են:

Վերջերս իրականացված «Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում»[56] հետազոտությունը նկատում է բնապահպանական ակտիվիզմի տեսանելի անկում, որը հարցեր է առաջ քաշում այն մասին, թե արդյոք ակտիվիզմը նվազում է, թե վերածվում է ավելի քիչ տեսանելի ձևերի: Ինչպես ընդգծում է Հայկական բնապահպանական ճակատի համահիմնադիր և էկոակտիվիստ Անի Խաչատրյանը,

56 Խալաթյան Սարիամ, Սանուսյան Արփի, Մարտիրոսյան Սոնա. «Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը». «Սոցիոսկոպ», 2025: Տե՛ս https://socioscope.am/archives/4591, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

բնապահպանական շարժումները պահանջում են նորացում՝ ստեղծագործական ներգրավման և երկարատև համագործակցության միջոցով: Նա նշում է.

«Տասնամյակներ տևած ակտիվ գործընթացներից հետո Հայաստանի բնապահպանական ակտիվիստների համայնքը հոգնել է: Շատ առումներով մեր օգտագործած մեթոդներն ու լեզուն նույնպես սպառվել են: Մեր արած ամեն ինչից հետո գալիս է մի պահ, երբ գաղափարները, կարծես, սպառվում են: Այդ պահին ակտիվիստների համայնքը հույս ունի, որ արվեստի և մշակույթի ոլորտը կճանաչի, որ բնապահպանական խնդիրները համընդհանուր են, և ոչ թե միայն էկոակտիվիստների պատասխանատվությունը, և կմիանա նոր տեսակետներով՝ ստեղծելով արվեստի ազդեցիկ նախագծեր, միջամտություններ, ներկայացումներ և ֆիլմեր, որոնք կնպաստեն նոր տեսլականների ձևավորմանը և կխորացնեն սոցիալական ներգրավումն ու էկոկրթությունը»:

Խաչատրյանը նաև ընդգծում է շարունակականության և կայուն ներգրավման կարևորությունը: Մինչ բնապահպանական թեմաները կարող են դառնալ «միտումներ» հասարակական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում, միանվագ համաժողովները կամ խորհրդանշական միջոցառումները հազվադեպ են երկարաժամկետ ազդեցություն ունենում:

«Կան ՀԿ-ներ և մշակութային հաստատություններ, որոնք կազմակերպում են կարևոր նախաձեռնություններ, ինչպիսիք են բնապահպանական թեմաներով գիտաժողովները, այլընտրանքային կրթական ծրագրերը, փառատոները և ցուցահանդեսները: Սակայն, սահմանափակ ռեսուրսների և ֆինանսների պատճառով, այս նախաձեռնությունները հաճախ կարճաժամկետ են: Անհրաժեշտ է հետևողական, գործնական աշխատանք, այնպիսի գործունեություն, որը մասնակիցներին կներգրավի ավելի երկար

ժամանակահատվածում: Առանց շարունակականության, նման ներգրավումը հազվադեպ է ունենում նշանակալի երկարաժամկետ ազդեցություն»:

Այս կառուցվածքային մասնատումն ավելի է արտացոլվում Հայաստանի և Եվրամիության միջև մշակութային երկխոսությունում: Հստակ ձևակերպված ազգային կայունության շրջանակների, ընդհանուր բառապաշարի և համակարգված ինստիտուցիոնալ ուղեցույցների բացակայությունը ոչ միայն ազդում է ներքին կառավարման վրա, այլև ձևավորում է երկրի կարողությունը՝ արդյունավետորեն ներգրավվելու եվրոպական մշակութային և բնապահպանական օրակարգերին:

Եվրոպական մշակութային համագործակցության գործիքները, շարժունության ծրագրերը և դրամաշնորհային մեխանիզմները, որոնք աջակցում են հայկական մշակութային ոլորտին, ավելի ու ավելի են առաջնահերթություն տալիս կայունությանը որպես հիմնական չափանիշ: Այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Ստեղծագործ Եվրոպան» և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այլ համագործակցության շրջանակները, իրենց գնահատման տրամաբանության մեջ ներառում են շրջակա միջավայրի պատասխանատվությունը, կանաչ շարժունությունը, ռեսուրսների արդյունավետությունը և երկարաժամկետ ազդեցությունը[57]: Այնուամենայնիվ, կայուն մշակութային արտադրության համար տեղական

57 ԵՄ մշակութային ծրագրերը, հատկապես «Ստեղծարար Եվրոպա» (2021–2027) նախաձեռնությունը՝ 2.44 միլիարդ եվրո բյուջեով, ավելի ու ավելի են ներառում բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունության սկզբունքներն իրենց հիմնական նպատակներում: Այս նախաձեռնությունները կենտրոնանում են մշակութային ոլորտի «կանաչացման», կլիմայի համար բարենպաստ գործելակերպերի խթանման, ինչպես նաև ստեղծարարության միջոցով վարքագծային փոփոխությունների և կայուն զարգացման առաջ մղման վրա ամբողջ Եվրոպայում: European Commission. “Creative Shifts: Empowering Culture for Sustainable Living”. Luxembourg: Publications Office of the European Union, 2025: Տե՛ս https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/043230ba-d250-11f0-8da2-01aa75ed71a1, [հասանելի է 20 . 03 . 2026-ի դրությամբ]:

մակարդակով մշակված ձեռնարկների, ազգային չափորոշիչների կամ ինստիտուցիոնալ ուղեցույցների բացակայության պայմաններում, հայ մշակութային գործիչները հաճախ բախվում են հայեցակարգային և գործնական մարտահրավերների այս սպասումները մեկնաբանելու և կիրառելու հարցում: Դժվարությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական կամ տեխնիկական սահմանափակումներով. այն նաև վերաբերում է բառապաշարին և հայեցակետերին: Մշակույթի կայունության վերաբերյալ ընդհանուր ազգային խոսույթի բացակայության համատեքստում արվեստագետներն ու անկախ մշակութային գործիչները ստիպված են հիմնականում ինքնուրույն կողմնորոշվել եվրոպական կայունության շրջանակներում, հաճախ անծանոթ եզրաբանությունը տեղական գործելակերպում թարգմանելով առանց համակարգված աջակցության: Ստեղծագործ Եվրոպա գրասենյակի ներկայացուցիչ և համակարգող Անի Հովսեփյանը նշում է.

«Կայունությունը հայկական մշակութային ոլորտի հիմնական մարտահրավերներից մեկն է՝ այն հասկանալու և նախագծերի ծրագրման մեջ կիրառելու առումով, նույնիսկ շարժունության կամ համագործակցության դրամաշնորհների դիմումների պատրաստման փուլում: Քանի որ չկան կայուն մշակութային աշխատանքի վերաբերյալ հաստատված ազգային ձեռնարկներ կամ ուղեցույցներ, և չկա պետական հաստատություն, որը կարող է ապահովել կառուցվածքային ուսուցում այս հարցերի վերաբերյալ, մենք հաճախ ստիպված ենք լինում անել ավելին քան բաց կանչերի հայտարարումը և տեղեկատվական հանդիպումների կազմակերպումը: Անհրաժեշտ է դառնում նախաձեռնել կայունության վերաբերյալ շարունակական սեմինարներ և կարողությունների զարգացման աշխատարաններ՝ սովորաբար համագործակցելով անկախ մշակութային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ, որոնք ավելի լավ են ծանոթ այս թեմաներին և դրանց չափումներին»:

Այս համատեքստում, Հայաստան-ԵՄ մշակութային երկխոսությունն արտացոլում է և՛ հնարավորություն, և՛ անհամաչափություն: Եվրոպական գործիքները խթաններ, ֆինանսավորում և նորմատիվ ուղղություն են տրամադրում ավելի կանաչ մշակութային պրակտիկաների համար: Այնուամենայնիվ, առանց համապատասխան ազգային շրջանակների, որոնք այս սկզբունքները կվերածեն տեղական հիմքով ռազմավարությունների, կայունության ներդրման գործընթացը մնում է թերի: Այս մտորումները մատնանշում են ավելի լայն կառուցվածքային խնդիր. կայունությունը պահանջում է շարունակականություն, ինստիտուցիոնալ հիշողություն և երկարաժամկետ հարթակներ: Առանց մեխանիզմների, որոնք կապում են արվեստագետներին, ակտիվիստներին, մշակութային կազմակերպություններին և քաղաքականության մշակողներին կայուն համագործակցության շուրջ, վտանգ կա, որ բնապահպանական ներգրավումը մնա դրվագային:

Այս ամենն ընդգծում է, որ միջոլորտային համագործակցությունը ոչ թե կամընտրական բարելավում է, այլ կառուցվածքային պահանջ՝ կայունությունը Հայաստանի մշակութային և բնապահպանական ապագայի մեջ ներդնելու համար: Առանց համատեղ հայեցակարգային շրջանակների, համակարգված կառավարման և կայուն ինստիտուցիոնալ հարթակների, կայունության ջանքերը, լինեն դրանք նախարարությունների, մշակութային հաստատությունների, թե քաղաքացիական հասարակության շրջանակներում, մնում են մասնատված և սահմանափակ ընդլայնմամբ:

2.3 ՔԱՂԱՔԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԵԼ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ՍՈՒՏՔ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանում մշակույթի կայունության վերաբերյալ որևէ իմաստալից քննարկում պետք է սկսվի երկրի սեփական ռազմավարական շրջանակներից: Ազգային օրակարգի ձևավորման գործում կենտրոնական դեր ունեն երկու հիմնական քաղաքական փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության 2023–2027 թվականների մշակույթի զարգացման ռազմավարությունը (կառավարության որոշում N1951-Լ, 2023 թվականի նոյեմբերի 10)[58] և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագիրը բնության պաշտպանության և զարգացման ոլորտում[59]:

Մշակութային զարգացման 2023–2027 թվականների ռազմավարությունը ձևակերպում է մշակութային ոլորտի արդիականացման և կառուցվածքային վերափոխման տեսլականը: Այն առաջնահերթություն է տալիս ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ստեղծագործական արդյունաբերության զարգացմանը, մասնագիտացմանը, թվային վերափոխմանը, միջազգային մրցունակությանը և մշակույթի տնտեսական ներդրման աճին: Մշակույթը ներկայացվում է որպես տնտեսական շարժիչ ուժ և նորարարական ոլորտ՝ համահունչ արդիականացման ավելի լայն նպատակներին: Ռազմավարությունն արտացոլում

58 Հայաստանի Հանրապետության կառավարություն. «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023–2027 թվականների ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին». ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1951-Լ որոշում: Տե՛ս https://www.arlis.am/hy/acts/185185, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

59 Հայաստանի Հանրապետության կառավարություն. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021–2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին». ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշում (Հավելված 1, «Շրջակա միջավայրի նախարարություն» ենթաբաժին): Տե՛ս https://env.am/storage/files/karavarutyun-voroshum-havelvac1-1902-1.pdf, [հասանելի է 20.03.2026-ի դրությամբ]:

է մշակութային ոլորտի արդյունաբերականացման, ենթակառուցվածքների ամրապնդման, արտահանման ներուժի ընդլայնման և կառավարման արդյունավետության բարձրացման հստակ կողմնորոշում:

Այնուամենայնիվ, թեպետ արդիականացումն ու թվայնացումը շեշտադրվում են, շրջակա միջավայրի կայունությունը չի դիտարկվում որպես մշակութային կառավարման սկզբունք: Փաստաթուղթը չի անդրադառնում մշակութային արտադրության էկոլոգիական հետքին, մշակութային հաստատություններում էներգիայի օգտագործմանը, միջոցառումների կազմակերպման բնապահպանական չափանիշներին կամ ժառանգության պահպանման գործում կլիմայական դիմակայությանը: Կայունությունը չի ձևակերպվում որպես մշակութային զարգացումը ձևավորող ներդրված չափանիշ. փոխարենը, տնտեսական աճը և ոլորտային մրցունակությունը մնում են որպես գերիշխող շրջանակ:

Ջուգահեռաբար, 2021–2030 թվականների շրջակա միջավայրի ռազմավարությունը կայունությունը հիմնականում հայեցակարգում է կարգավորող, տեխնիկական և ոլորտային տեսանկյունից: Այն կենտրոնանում է կլիմայի փոփոխությանը հարմարվողականության, աղտոտվածության նվազեցման, թափոնների կառավարման, կենսաբազմազանության պահպանման, շրջակա միջավայրի դիտարկման համակարգերի և համապատասխանության մեխանիզմների վրա: Ռազմավարությունը շրջակա միջավայրի կառավարումը տեղակայում է ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում՝ շեշտը դնելով տեխնիկական արդիականացման և կարգավորող գործընթացների աջակցման վրա:

Մինչ հիշատակվում են հանրային իրազեկությունն ու շահագրգիռ կողմերի մասնակցությունը, մշակութային հաստատությունները, արվեստի գործիչները և ժառանգության ենթակառուցվածքները կառուցվածքայնորեն չեն դիրքավորվում որպես ռազմավարական գործընկերներ շրջակա միջավայրի վերափոխման առաջխաղացման գործում: Շրջակա միջավայրի կառավարումը մեծ մասամբ մնում է տեխնոկրատական, և մշակույթի դերը հանրային

ընկալման, վերաբերմունքի, վարքային փոփոխության կամ բնապահպանական գրագիտության ձևավորման գործում համակարգված կերպով չի ներդրվում քաղաքականության ճարտարապետության մեջ:

Ընդհանուր առմամբ, այս երկու ազգային ռազմավարությունները ձևակերպված են առանց փոխհատումների: Այս փաստաթղթերի միջև հստակ խաչաձև հղումների կամ ներդրված շրջանակների բացակայությունը վկայում է ազգային մակարդակում քաղաքականության սահմանափակ երկխոսության մասին:

Այս կառուցվածքային տարանջատումն ավելի ակներև է դառնում, երբ դիտարկվում է Հայաստանի միջազգային պարտավորությունների համատեքստում: Հայաստանը ստորագրել է ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որը ժամանակավոր կիրառման մեջ է մտել 2018 թվականին և լիովին ուժի մեջ է մտել 2021 թվականին: ՀԸԳՀ-ն ներառում է բնության պաշտպանության, կլիմայական գործողությունների, կայուն զարգացման և մշակութային համագործակցության վերաբերյալ դրույթներ: Ավելին, Հայաստանը մասնակցում է «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին և «Հորիզոն Եվրոպա» ծրագրին. երկուսն էլ ֆինանսավորման չափանիշներում ներառում են կայունության և կանաչ անցման սկզբունքները:

Եվրոպական կանաչ գործարքը (2019) էկոլոգիական անցումը ներկայացնում է որպես համակարգային վերափոխում, որը ներառում է կլիմայական չեզոքությունը, թվային նորարարությունը, արդյունաբերական բարեփոխումները և սոցիալական ներառումը: Դրա «երկվորյակ անցման» հայեցակարգը հստակորեն կապում է կանաչ և թվային վերափոխումները կառավարման բոլոր ոլորտներում: ԵՄ ծրագրերին Հայաստանի մասնակցության միջոցով կայունության սկզբունքները մուտք են գործում հայկական ինստիտուցիոնալ դաշտ՝ ֆինանսավորման պահանջների, նախագծերի իրավասության չափանիշների և համաձայնեցման մեխանիզմների միջոցով:

Հայաստանի միացումը ԵՄ Հորիզոն 2020 շրջանակային ծրագրին, ինչպես նշվել է կլիմայի փոփոխության մասին երկրի չորրորդ ազգային հաղորդագրության մեջ, որը

ներկայացվել է ԿՓԶԿ-ին 2016 թվականին, նշանակալի քայլ էր հայկական հետազոտական հաստատությունները եվրոպական նորարարական էկոհամակարգերում, այդ թվում՝ կլիմայի հետ կապված հետազոտություններում ներառելու գործում: Նմանապես, Ստեղծագործ Եվրոպայի գրասենյակը մշակութային հաստատություններին տրամադրում է ուսուցում և ուղղորդում բնապահպանական նկատառումները նախագծերի պլանավորման և իրականացման մեջ ներառելու վերաբերյալ:

Այս մեխանիզմները ստեղծում են կառուցվածքային ուղիներ, որոնց միջոցով եվրոպական կայունության օրակարգերն ազդում են հայկական պրակտիկաների վրա: Այնուամենայնիվ, նման ազդեցությունը սովորաբար մնում է նախագծահեն և պայմանավորված արտաքին գործոններով: Կայունությունը հաճախ դառնում է համապատասխանության պահանջ դրամաշնորհներով ֆինանսավորվող նախաձեռնությունների շրջանակներում, և ոչ թե ազգային կառավարման շրջանակներում ներդրված համակարգային սկզբունք:

Արդյունքում ձևավորված քաղաքական միջավայրը բացահայտում է շերտավոր, բայց անհամաչափ երկխոսություն: Միջազգային շրջանակները խթանում են բնապահպանական և մշակութային չափումների ինտեգրումը, իսկ ԵՄ գործիքները խրախուսում են համապատասխանեցումը կայունության նպատակներին: Միևնույն ժամանակ, ազգային մակարդակում ռազմավարական փաստաթղթերը շարունակում են արտացոլել ոլորտային բաժանումը: Քաղաքականության վերաբերյալ երկխոսությունը պաշտոնապես գոյություն ունի՝ համաձայնագրերի, կոնվենցիաների, ֆինանսավորման գործիքների և դիվանագիտական համաձայնեցման միջոցով, բայց դեռևս թույլ է գործառնական կառավարման մակարդակում: Կայունության եզրաբանությունը շրջանառվում է ռազմավարական տեքստերում, սակայն այն հետևողականորեն չի արտացոլվում ընդհանուր հայեցակարգային շրջանակներում, համակարգված նախագծման գործընթացներում կամ մշակութային և բնապահպանական հաստատությունների միջև համատեղ իրականացման մեխանիզմներում:

Այս համատեքստում վտանգ է ծառանում, որ կանաչ անցումը կիրականացվի որպես զուգահեռ ոլորտային բարեփոխում, և ոչ թե որպես փոխհամաձայնեցված հասարակական վերափոխում: Առանց Մշակույթի զարգացման ռազմավարության և Շրջակա միջավայրի ռազմավարության միջև համաձայնեցման, ինչպես նաև մշակութային արտադրության և ինստիտուցիոնալ կառավարման միջև կայունության չափանիշների ներդրման, քաղաքականության թարգմանությունը մնում է մասնակի: Մշակույթի և շրջակա միջավայրի միջև երկխոսությունը մնում է հիմնականում հռչակագրային և հազվադեպ՝ կառուցվածքային:

Եզրակացություն

«Կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն» հետազոտությունն ընդգծում է Հայաստանի մշակութային ոլորտում կայունությանն ուղղված փոխհատվող և միջոլորտային մոտեցման աճող անհրաժեշտությունը: Այն մատնանշում է մշակույթի և շրջակա միջավայրի փոխհատման տիրույթում առկա համակարգային բացը, որը ձևավորված է երեք կապակցված մարտահրավերների շուրջ. հայեցակարգային, ինստիտուցիոնալ և տեսանելիության ու շարունակականության մակարդակներում:

Հայեցակարգային մակարդակում բացակայում է վերլուծական այնպիսի ընդհանուր շրջանակ, որի միջոցով մշակույթն ու բնապահպանական կայունությունը կդիտարկվեն որպես փոխկապակցված տիրույթներ: Մշակույթը հաճախ ներկայացվում է սոսկ խորհրդանշական կամ ժառանգությանն առնչվող համատեքստում, մինչդեռ բնապահպանական կառավարումը հիմնականում մնում է տեխնիկական և կանոնակարգող տիրույթում: Այս տարանջատումը ստվերում է մշակութային արտադրության և մասնակցության մեջ ներդրված էկոլոգիական գիտելիքը, սոցիալական փորձառությունները և փոխհարաբերական արժեքները՝

մշակույթի դերը սահմանափակելով լրացուցիչ կամ կրթական գործառույթներով և չճանաչելով այն որպես կայունության օրակարգերի ձևավորման գործուն դերակատար:

Ինստիտուցիոնալ մակարդակում մասնատումը սահմանափակում է համակարգված գործողությունների իրականացումը: կառուցվածքային միջոլորտային մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է մշակութային հաստատությունների, բնապահպանական մարմինների և կրթական դերակատարների միջև տևական համագործակցությանը: Ի հայտ եկող միջոլորտային պրակտիկաները ներդրվում են հիմնականում անկախ նախաձեռնությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ անհատ մասնագետների ջանքերով, դրանք սովորաբար կրում են նախագծային և կարճաժամկետ բնույթ՝ կախված լինելով անհատական նախաձեռնողականությունից, և ոչ թե համակարգային աջակցությունից:

Տեսանելիության և շարունակականության մակարդակում կայուն կամ կայունությանն ուղղված մշակութային պրակտիկաները դեռևս անբավարար են փաստագրված և թույլ են ինստիտուցիոնալացված: Հետևաբար, դրանք հազվադեպ են հիմք դառնում ազգային զարգացման ռազմավարությունների կամ երկարաժամկետ բնապահպանական նախագծման համար՝ չնայած համայնքները մոբիլիզացնելու և էկոլոգիական գիտակցությունը խթանելու իրենց ակնհայտ ներուժի:

Իրականացված վերլուծությունը, անկախ այս կառուցվածքային բացերի՝ փաստում է, որ մշակույթը զգալի ներուժ ունի ներկայանալու որպես ռազմավարական գործընկեր Հայաստանի կանաչ անցման գործընթացում: Մշակութային նախաձեռնություններն արդեն իսկ նպաստում են հանրային ներգրավմանը, բնապահպանական գրագիտությանը և համայնքահեն կայուն պրակտիկաներին: Այդուհանդերձ, առանց քաղաքականության փոխհամաձայնեցված կառուցակարգի այդ ներդրումը չի կարող ընդլայնվել, համակարգվել կամ

պարբերաբար ներդրվել բնապահպանական կառավարման գործընթացներում:

Հետևաբար, հետազոտությունը կոչ է անում վերահիմաստավորել մշակույթը որպես ակտիվ և ռազմավարական դերակատար Հայաստանի կանաչ անցման համատեքստում: Սա պահանջում է համատեղ հայեցակարգային բառապաշարի ներդրում, քաղաքականության շրջանակների գործարկում և ինստիտուցիոնալ համակարգման մեխանիզմների վերանայում, որոնք մշակույթն ու շրջակա միջավայրը կճանաչեն որպես փոխադարձաբար աջակցող համակարգեր: Երկարաժամկետ միջոլորտային հարթակները պետք է հնարավորություն տան մշակութային հաստատությունների, բնապահպանական մարմինների, կրթական գործիչների և քաղաքացիական հասարակության միջև կայուն համագործակցության:

Մշակութային կառավարման մեջ կայունության ներդրումը նաև ամրապնդում է Հայաստանի ժողովրդավարական զարգացումը և համապատասխանում է եվրոպական գործընկերության շրջանակներում ստանձնած պարտավորություններին, այդ թվում՝ ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին (ՀԸԳՀ): Հետևաբար, կայունության ներդրումը մշակութային քաղաքականության մեջ կարող է ծառայել միաժամանակ և՛ որպես ներքին բարեփոխումների ռազմավարություն, և՛ որպես Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի մաս:

Առաջարկություններ

Մշակույթը դիտարկել որպես ակտիվ գործընկեր Հայաստանի բնապահպանական անցման հարցում

Առկա համատեքստ ⇝ վերլուծությունը ցույց է տալիս, որ մշակույթը Հայաստանում դեռևս մեծ մասամբ ընկալվում է որպես երկրորդական կամ օժանդակ ոլորտ շրջակա միջավայրի և կայունության օրակարգերի շրջանակներում: Մշակութային գործիչների և հաստատությունների հայեցակարգային, մեթոդաբանական և մասնակցային ներուժը դեռևս բավարար չափով չի ճանաչվում քաղաքականության մշակման և իրականացման մեջ: Արդյունքում, մշակույթի կարողությունը և ներուժը՝ նպաստելու բնապահպանական իրազեկմանը, վարքային փոփոխություններին և սոցիալապես ներդրված կայունության պրակտիկաներին հաճախ, անտեսվում է և մնում է չիրացված:

Առաջարկություն ⇝ Մշակույթը պետք է պաշտոնապես ներկայացվի որպես հավասար և ռազմավարական գործընկեր Հայաստանի կանաչ անցման գործընթացում: Պետական հաստատությունները և մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմինները, պետք է ճանաչեն և ներառեն մշակութային հաստատությունները,

ստեղծագործական արդյունաբերությունը և անկախ մասնագետներին որպես կայուն քաղաքականության և գործունեության հիմնական ներդրողներ: Սա պահանջում է մշակութային հեռանկարների ներդրում բնապահպանական ռազմավարություններում, միջոլորտային համագործակցության խթանում և մշակույթի մեթոդաբանական և սոցիալական կարողությունների ճանաչում՝ ներառական և երկարաժամկետ էկոլոգիական վերափոխումը խթանելու համար:

Միջազգային կայունության շրջանակների որդեգրում և տեղայնացում

Առկա համատեքստ ⇝ Հայաստանում միջազգային կայունության շրջանակները և քաղաքականության օրակարգերը մշակութային և բնապահպանական կառավարման շրջանակներում դեռևս ակտիվորեն չեն տեղայնացվել կամ գործառնականացվել: Թեպետ երկիրը միացել է մի շարք միջազգային նախաձեռնությունների, այդ թվում՝ Եվրամիության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի առընթեր նախաձեռնությունների, դրանց կիրառումը հաճախ մնում է պաշտոնական հղման մակարդակում և հազվադեպ՝ բովանդակային ընդունման: Արդյունքում, միջազգային առաջարկությունները բավարար չափով չեն թարգմանվում տեղական քաղաքականության լեզվի, ինստիտուցիոնալ պրակտիկաների և իրականացման մեխանիզմների, ինչը սահմանափակում է դրանց արդիականությունը և երկարաժամկետ ազդեցությունը Հայաստանի մշակութային և բնապահպանական ոլորտներում:

Առաջարկություն ⇝ Միջազգային կայունության շրջանակները պետք է համակարգված կերպով թարգմանվեն, տեղայնացվեն և ինստիտուցիոնալ կերպով ներդրվեն Հայաստանի քաղաքականության մշակման և կառավարման գործընթացներում: Այս դրույթները պետք է անցնեն պաշտոնական համաձայնեցումներից անդին՝ դեպի միջազգային փորձի կառուցվածքային ընդունում և հարմարեցում՝ ապահովելով, որ գլոբալ շրջանակները

դառնան գործառնական, հասանելի և կիրառելի ազգային և տեղական հաստատությունների համար: Արդյունավետ որդեգրումը պետք է հիմնված լինի հենց Հայաստանի էկոլոգիական պայմանների, մշակութային պրակտիկաների և ինստիտուցիոնալ կարողությունների վրա՝ հնարավորություն տալով համատեքստի նկատմամբ զգայուն և կայուն իրականացման: Այս գործընթացի շրջանակներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է ճանաչվեն որպես հիմնական միջնորդ դերակատարներ, որոնք կարող են նպաստել գիտելիքների փոխանցմանը, աջակցել ինստիտուցիոնալ ուսուցմանը և խթանել երկխոսությունը պետական մարմինների, մշակութային հաստատությունների, բնապահպանների և տեղական համայնքների միջև:

Մշակել ընդհանուր սահմանումներ և հայեցակարգային շրջանակներ

Առկա համատեքստ ⇝ Սույն հետազոտությունը նշում է ընդհանուր բառապաշարի և հայեցակարգային շրջանակի բացակայությունը՝ որպես Հայաստանում մշակութային և բնապահպանական ոլորտների միջև համագործակցությունը սահմանափակող հիմնական խոչընդոտ: Հանրային կառավարման մակարդակում մշակութային և բնապահպանական քաղաքականությունները շարունակում են մշակվել և իրականացվել մեծ մասամբ ինքնուրույն և չփոխհատվող եղանակներով՝ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև սահմանափակ հայեցակարգային կամ մեթոդաբանական փոխանակմամբ: Այս մասնատումն արտացոլվում է ինստիտուցիոնալ գործունեությունում, որտեղ մշակույթը և բնապահպանական կայունությունը լուծվում են առանձին քաղաքականության տրամաբանության միջոցով՝ խոչընդոտելով ներդրված ռազմավարությունների և համակարգված գործողությունների ձևավորմանը:

Առաջարկություն ⇝ Մշակույթն ու շրջակա միջավայրը կապող միասնական բառապաշար և ընդհանուր հայեցակարգային

շրջանակ պետք է մշակվի և ինստիտուցիոնալ կերպով ընդունվի Հայաստանի համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից: Հիմնական հասկացությունները՝ ինչպիսիք են մշակույթը, մշակութային ժառանգությունը, բնական ժառանգությունը, շրջակա միջավայրը, կենսաբազմազանությունը, լանդշաֆտը, կայունությունը, դիմակայունությունը, համայնքի մասնակցությունը, համաստեղծարարությունը, տարածական և բնապահպանական արդարությունը, շրջանաձև տնտեսությունը, ռեսուրսների պատասխանատու կառավարումը, ավանդական և տեղական գիտելիքները, հանրային տարածքը, տարածքային զարգացումը, բարեկեցությունը և թվային փոխակերպումը, և այլ եզրույթները պետք է ձևակերպվեն և համակարգված կերպով ներառվեն քաղաքականության փաստաթղթերում, ռազմավարական պլանավորման գործընթացներում, ֆինանսավորման չափանիշներում և ինստիտուցիոնալ ուղեցույցներում: Ընդհանուր հայեցակարգային լեզվի ստեղծումը կամրապնդի միջոլորտային փոխըմբռնումը, կնպաստի ավելի արդյունավետ համակարգմանը և կաջակցի մշակութային և բնապահպանական ոլորտներում փոխհամաձայնեցված, ներդրված քաղաքականության մշակմանը:

Ստեղծել միջոլորտային համակարգման և համագործակցության մեխանիզմներ

Առկա համատեքստ ⇝ Հայաստանում մշակութային, բնապահպանական, կրթական և տեխնոլոգիական դերակատարների միջև համագործակցությունը հիմնականում նախագծահեն է և մասնատված, ոլորտների և կառավարման մակարդակների միջև կառուցվածքային սահմանափակ համակարգմամբ: Փոխանակման և համատեղ նախագծման մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է զուգահեռ նախաձեռնությունների, և ոչ թե միմյանց հետ երկխոսության մեջ գործող ծրագրերի: Երևան եկող համագործակցությունը հաճախ կախված է առանձին հաստատություններից կամ դոնորների կողմից իրականացվող կարճաժամկետ

նախագծերից, որոնք չունեն կայուն ռեսուրսներ, ինստիտուցիոնալ հենարաններ և երկարատև ազդեցություն: Սա սահմանափակում է կայունության վրա հիմնված, փոխհամաձայնեցված ծրագրերի մշակումը և նվազեցնում միջոլորտային գործունեության տեսանելիությունն ու ազդեցությունը:

Առաջարկություն ⇝ Պետական հաստատությունների կողմից պետք է ստեղծվեն միջոլորտային համակարգման հետևողական մեխանիզմներ՝ մշակութային, բնապահպանական, կրթական, տեխնոլոգիական և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի միջև կայուն համագործակցություն ապահովելու համար: Կարճաժամկետ նախաձեռնություններից անդին շարունակականություն ապահովելու համար, այս մեխանիզմները պետք է լինեն պաշտոնապես լիազորված, բավարար ռեսուրսներով ապահովված և գործող կառավարման կառուցվածքներում ներառված: Նախագծված լինելով որպես բազմամակարդակ հարթակներ՝ դրանք պետք է նպաստեն համագործակցությանը համայնքային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում՝ կառավարման շրջանակների զարգացմանը զուգընթաց ընդլայնվելու ճկունությամբ:

Նման մեխանիզմները կարող են ներառել միջգերատեսչական աշխատանքային խմբեր, բազմաշահագրգիռ կողմերի խորհրդատվական հարթակներ և թեմատիկ աշխատանքային խմբեր՝ հստակ գործառնական պարտականություններով: Նրանց գործառույթները պետք է ներառեն կանոնավոր հաղորդակցություն, ընդհանուր ռազմավարական նախագծում, տվյալների և գիտելիքների փոխանակում, համատեղ հայեցակարգային շրջանակների մշակում և փորձնական ծրագրերի և ֆինանսավորման սխեմաների համակարգում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և անկախ մշակութային գործիչները պետք է ճանաչվեն որպես այս կառույցների շրջանակներում հիմնական գործընկերներ, որոնք նպաստում են գիտելիքների փոխանակմանը, փորձարկմանը և նախագծերի համայնքահեն

իրականացմանը:

Արդյունավետությունն ապահովելու համար համակարգման մեխանիզմները պետք է ներառեն դիտարկման և գնահատման բաղադրիչներ, կառուցվածքային հետադարձ կապի օղակներ և պարբերական հանրային հաշվետվություններ: Կապելով հայեցակարգային համապատասխանեցումը գործնական իրականացման և ռեսուրսների բաշխման հետ՝ այս հարթակները կարող են ամրապնդել կայուն քաղաքականության ներդրումը և հնարավորություն տալ մշակութային և բնապահպանական ոլորտներում երկարաժամկետ համագործակցության:

Աջակցել մշակույթի ոլորտում կայուն ինստիտուցիոնալ պրակտիկաներին

Առկա համատեքստ ⇝ Հայաստանի մշակութային հաստատությունները ներկայումս սահմանափակ կառուցվածքային աջակցություն են ստանում կայուն պրակտիկաներ որդեգրելու համար: Մինչ առանձին կազմակերպություններն ու մասնագետները ավելի ու ավելի են հետաքրքրություն ցուցաբերում կայունության նկատմամբ, իրականացումը մնում է անհավասար և մեծապես կախված է անկախ նախաձեռնություններից կամ արտաքին ֆինանսավորումից: Հստակ ազգային ուղեցույցների, ոլորտային չափանիշների և ֆինանսավորման հետևողական մեխանիզմների բացակայությունը սահմանափակում է մշակութային հաստատությունների կարողությունը իրականացնելու երկարաժամկետ էկոլոգիական վերափոխումներ կամ ներդնելու կայունությունն իրենց գործառնական և ծրագրային մոդելներում:

Առաջարկություն ⇝ Մշակութային հաստատությունները պետք է ստանան ֆինանսական, տեխնիկական և տեղեկատվական նպատակային աջակցություն՝ էկոլոգիապես կայուն գործելակերպի համակարգված կիրառումը հնարավոր դարձնելու համար: Այս աջակցությունը պետք է ներառի հետևողական ֆինանսավորման սխեմաներ, խրախուսական ծրագրեր և հստակ ինստիտուցիոնալ

ուղեցույցներ՝ էներգաարդյունավետությունը բարելավելու, թափոնները կրճատելու, ռեսուրսների պատասխանատու կառավարում իրականացնելու և կայունության սկզբունքները ինչպես ծրագրային, այնպես էլ ամենօրյա գործունեության մեջ ներդնելու համար: կայունության չափորոշիչներն ու չափանիշները նույնպես պետք է աստիճանաբար ներառվեն պետական ֆինանսավորման շրջանակներում, գնումների ընթացակարգերում և ինստիտուցիոնալ գնահատման համակարգերում՝ ապահովելու երկարաժամկետ ոլորտային վերափոխում:

Մշակել արհեստական բանականության և թվայնացման վերաբերյալ կանաչ քաղաքականություն

Առկա համատեքստ ⇝ Թեև թվայնացումը և արհեստական բանականության ինտեգրումը զգալի հնարավորություններ են ընձեռում Հայաստանի մշակութային ոլորտի զարգացման համար, ներկայումս չկա որևէ հետևողական քաղաքականության շրջանակ, որը կանդրադառնա այս տեխնոլոգիաների բնապահպանական, մշակութային և էթիկական հետևանքներին: Թվային ենթակառուցվածքների՝ այդ թվում՝ տվյալների կենտրոնների, ամպային պահեստավորման և արհեստական բանականության համակարգերի էներգիայի և ռեսուրսների պահանջները համակարգված կերպով չեն հաշվառվում, և սահմանափակ ուղեցույցներ կան էկոլոգիական ազդեցությունները նվազագույնի հասցնելու, մշակութային և մտավոր սեփականության պաշտպանության կամ տեխնոլոգիական մշակութային նախաձեռնություններում էթիկական չափանիշները ներդնելու վերաբերյալ: Արդյունքում, թվայնացումը կարող է ակամա նպաստել ածխածնի բարձր արտանետումների, էլեկտրոնային թափոնների և միջավայրի նկատմամբ այլ բացասական ազդեցությունների աճին, դրանով իսկ հանգեցնելով կայունության նպատակների հետ անհամապատասխանության:

Առաջարկություն ⇝ Անհրաժեշտ է մշակել և ինստիտուցիոնալացնել մշակութային ոլորտում

արհեստական բանականության և թվայնացման շուրջ հստակ քաղաքականություններ՝ մեծ շեշտադրում կատարելով բնապահպանական կայունության, էթիկական չափանիշների և մշակութային իրավունքների վրա: Քաղաքականությունը պետք է.

- Ներառի թվային և ԱԲ նախագծերի պարտադիր կայունության գնահատումներ՝ քննելով էներգիայի սպառումը, սարքավորումների կյանքի ցիկլը, ամպային տիրույթի օգտագործումը և ածխածնի հետքը:

- Առաջնահերթություն տա վերականգնվող էներգիայի լուծումներին և ռեսուրսների արդյունավետ օգտագործման ենթակառուցվածքներին՝ սերվերների, ամպային տիրույթների և թվային գործունեության համար:

- Սահմանի էթիկական ուղեցույցներ և թափանցիկության պահանջներ՝ մտավոր սեփականության, մշակութային իրավունքների և համայնքային շահերի պաշտպանության համար:

- Ներդնի կայունության և էթիկական չափանիշները պետական ֆինանսավորման սխեմաներում, գնումների գործընթացներում և ինստիտուցիոնալ գնահատման շրջանակներում:

- Խրախուսի մշակույթի, տեխնոլոգիաների, բնապահպանական և քաղաքացիական հասարակության գործիչների միջև բազմամակարդակ համակարգումը՝ թվային կայունության պրակտիկաների համակարգային ընդունումը և շարունակական դիտարկումն ապահովելու համար:

Այս միջոցառումները քաղաքականության և կառավարման կառուցվածքներում ներդնելով՝ Հայաստանը կարող է երաշխավորել, որ ԱԲ-ն և թվայնացումը դրականորեն կնպաստեն կայուն զարգացման՝ ինչպես էկոլոգիական, այնպես էլ մշակութային չափումներին,

համապատասխանեցնելով տեխնոլոգիական նորարարությունը կանաչ անցման և մշակութային զարգացման նպատակներին։

Խթանել միջոլորտային կայունությունը ժողովրդավարական անցման գործընթացում

Առկա համատեքստ ⇝ Հայաստանում ներկա քաղաքականությունն ու ինստիտուցիոնալ պրակտիկաները ցույց են տալիս, որ մշակութային և բնապահպանական ոլորտները մեծ մասամբ գործում են մեկուսացված՝ համապատասխան նախարարությունների և գործակալությունների միջև սահմանափակ համակարգմամբ։ Այս մասնատումը ոչ միայն ինստիտուցիոնալ է, այլև ռազմավարական. չկա համընդհանուր քաղաքական շրջանակ, որը ինտեգրի կայունությունը, մշակույթը և բնապահպանական քաղաքականությունը որպես փոխադարձաբար լրացնող չափումներ։ Արդյունքում, մշակույթն ու բնապահպանական կառավարումը որպես սոցիալական ներգրավման, հանրային պատասխանատվության և ժողովրդավարական կառավարման լծակներ օգտագործելու հնարավորությունները մնում են թերօգտագործված։

Առաջարկություն ⇝ Տեղական և ազգային իշխանությունները պետք է հստակորեն ճանաչեն մշակութային և բնապահպանական ոլորտների միջև երկխոսությունն ու համագործակցությունը որպես երկրի առավել ընդգրկուն քաղաքական և ժողովրդավարական զարգացման անբաժանելի մաս։ Միջոլորտային նախաձեռնությունները պետք է սահմանվեն որպես Հայաստանի ժողովրդավարական անցման և Եվրոպական միության չափանիշների ու գործելակերպին համապատասխանեցման մաս։ Գործընկերության ամրապնդմանը, ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացմանը և ոլորտային զարգացմանն ուղղված ջանքերը պետք է դիտարկվեն որպես ժողովրդավարացման գործընթացներ, որոնք խթանում են պատասխանատու, մասնակցային և թափանցիկ կառավարումը։ Այս քաղաքական հեռանկարում կայունության

և մշակույթի ներառումը հնարավորություն կտա այս ոլորտներին ակտիվորեն նպաստել ժողովրդավարական համախմբմանը, քաղաքացիական ներգրավմանը և ներառական քաղաքականության մշակմանը:

Հետգրություն

Դեպի միջոլորտային և միջգիտակարգային մոտեցումներ

2018 թվականից ի վեր CSN Lab-ի թիմով աշխատում ենք հետազոտական, գեղարվեստական և վավերագրական տարբեր պրակտիկաների փոխհատման կետում՝ առաջնորդվելով ընդհանուր նշանաբանով. «Մշակույթ՝ հանուն ժողովրդավարության, երկխոսություն՝ հանուն խաղաղության»: Այս տարիների ընթացքում անդրադարձել ենք ամենատարբեր թեմաների և ստեղծել հարթակներ, որտեղ հետազոտողները, արվեստագետները, ճարտարապետները, ակտիվիստներն ու այլ ոլորտների մասնագետները կարող են հանդիպել, փոխանակվել գիտելիքով և համատեղ աշխատել: Այս ամբողջ աշխատանքի ընթացքում անփոփոխ է մնացել մեր բաց դիրքորոշումը տարբեր գիտակարգերի, մեթոդների և գիտելիքի ձևերի նկատմամբ: Միջգիտակարգայնությունն ու միջոլորտայնությունը մեզ համար պարզապես մոտեցումներից մեկը չեն. դրանք դարձել են մեր հիմնական ռազմավարությունը և մշակույթի ու հասարակության մասին մտածելու եղանակը:

Այս դիրքորոշումը հատկապես կարևոր է Հայաստանում, ինչպես նաև Արևելյան գործընկերության բազմաթիվ այլ երկրներում, որտեղ խորհրդային համակարգի ժառանգությունը շարունակում է ազդել գիտելիքի արտադրման, կազմակերպման և տարածման եղանակների վրա: Տասնամյակներ շարունակ կրթությունն ու

հետազոտությունը կառուցված էին գիտակարգային կոշտ սահմանների շուրջ, իսկ մշակույթն ու գիտելիքը սերտորեն կապված էին ինստիտուցիոնալ հիերարխիաների և գաղափարական վերահսկողության հետ: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ կառույցներից շատերը կազմաքանդվեցին, սակայն դրանց անմիջապես չփոխարինեցին գիտելիքի և փորձագիտական կարողությունների նոր ու բավարար չափով զարգացած համակարգեր: Արդյունքում մենք հաճախ հայտնվեցինք գիտելիքի երկու ձևերի միջև. մի կողմից՝ խորհրդային շրջանից ժառանգված, մյուս կողմից՝ արևմտյան ակադեմիական և ինստիտուցիոնալ համատեքստերից եկող գիտելիքի, որը միշտ չէ, որ բավարար չափով հարմարեցված է մեր սեփական սոցիալական, մշակութային և քաղաքական իրողություններին:

Ուստի, մեզ համար քաղաքացիական հասարակության աշխատանքը չի կարող սահմանափակվել միայն այս փոխակերպումների հետևանքով առաջացած բացերը լրացնելով: Այն նաև նշանակում է քննադատաբար վերանայել մեզ ժառանգված կառույցներն ու հիերարխիաները և մասնակցել այն հասարակության ժողովրդավարական վերափոխմանը, որում ապրում ենք: Սա պահանջում է ոչ միայն նոր ինստիտուտներ և նոր քաղաքականություններ, այլև գիտելիքի արտադրման ու տարածման նոր եղանակներ: Այն պահանջում է, որ տարբեր գիտակարգերը երկխոսեն միմյանց հետ, փորձագիտական գիտելիքի տարբեր ձևերը ճանաչեն միմյանց, իսկ մշակույթը դառնա տարածք, որտեղ հասարակությունը կարող է հարցադրել իրեն ձևավորող կառույցները:

Սա՛ է եղել CSN Lab-ում մեր աշխատանքի առանցքում: Տարիների ընթացքում մենք կապել ենք հիշողության ուսումնասիրությունները բնության ուսումնասիրության, ճարտարապետական հետազոտությունները՝ գենդերային ուսումնասիրությունների, տեսողական ուսումնասիրությունը՝ հակամարտությունների և խաղաղության ուսումնասիրությունների, իսկ մշակութային վերլուծությունը՝ տարածական և բնապահպանական արդարության հարցերի հետ: Մեզ հետաքրքրել են այս ուղղությունների միջև

կապերը և այն նոր հարցերը, որոնք ի հայտ են գալիս, երբ տարբեր տեսանկյուններ սկսում են երկխոսել: Մեր բազմաթիվ նախագծերում դուրս ենք եկել նաև զուտ քանակական մոտեցումների սահմաններից՝ հասկանալու այն նարատիվները, փորձառություններն ու մշակութային պրակտիկաները, որոնց միջոցով մարդիկ և համայնքները իմաստավորում են իրենց շրջապատն ու հասարակության մեջ սեփական տեղը:

Բնապահպանական հարցերի նկատմամբ մեր հետաքրքրությունը զարգանում է նույն տրամաբանությամբ: Մեզ համար բնությունը ոչ թե մեր մշակութային օրակարգին ավելացած նոր թեմա է, այլ գիտելիքի, մշակույթի և հանրային տարածքի ժողովրդավարացման շուրջ մեր աշխատանքի բնական շարունակությունը: Բնապահպանական հարցերը երբեք միայն բնապահպանական չեն. դրանք միաժամանակ պատմության, հիշողության, քաղաքականության, տնտեսության, ճարտարապետության և մշակույթի հարցեր են: Գետը, անտառը, լանդշաֆտը կամ քաղաքային ջրային համակարգը պարզապես աշխարհագրական կամ էկոլոգիական օբյեկտ չեն. դրանք նաև հիշողության վայր են, քաղաքական որոշումներով և տնտեսական շահերով ձևավորված տարածք, առօրյա կյանքի տարր և շատ հաճախ՝ վիճարկվող տարածք:

Հենց այդ պատճառով բնության ուսումնասիրությունն այսօր այլևս չի կարող սահմանափակվել միայն բնապահպանական գիտության, կենսաբանության կամ աշխարհագրության շրջանակներով: Բնական աշխարհի հետ մեր հարաբերությունները հասկանալու համար անհրաժեշտ է գիտելիքի տարբեր ձևերի համատեղ աշխատանք, սակայն միաժամանակ անհրաժեշտ է վերանայել մոդեռնությունից ժառանգված հիմնարար ենթադրություններից մեկը՝ այն, որ բնությունը գոյություն ունի նախևառաջ որպես մարդկային ճանաչողության, կառավարման և օգտագործման օբյեկտ: Բնության իրավունքների շուրջ ժամանակակից քննարկումները վիճարկում են հենց այս հիերարխիան՝ առաջարկելով բնությունը ճանաչել ոչ միայն որպես մի բան, որը մարդն ուսումնասիրում, կառավարում կամ պաշտպանում է, այլև որպես ինքնուրույն արժեք ունեցող սուբյեկտ, որի

շահերը գնալով ավելի հաճախ են ստանում իրավական և քաղաքական ճանաչում:

Կրկին վերադառնալով մեր բարդ պատմական ժառանգության, ժողովրդավարական անցման անհրաժեշտության և եվրոպական արժեքների հետ Հայաստանի երկխոսության հարցերին՝ ուզում եմ երկու բան շատ հստակ արձանագրել: Տասնամյակներ շարունակ մեր երկրներում բնությունն ուսումնասիրվել և նկարագրվել է նախևառաջ այն վերահսկելու, շահագործելու և առավելագույն օգուտ քաղելու նպատակով: Միևնույն ժամանակ մշակույթը նախևառաջ չի ընկալվել որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տարածք, այլ գործել է որպես քարոզչության, գաղափարական վերահսկողության և գիտելիքի ու մտքի կարգավորման մեխանիզմ: Այս երկու պատմական հետագծերը կապվում են ընդհանուր տրամաբանությամբ. և՛ բնությունը, և՛ մշակույթը դիտարկվել են որպես վերահսկման ենթակա օբյեկտներ և հազվադեպ՝ որպես տարածքներ, որտեղ կարող են ճանաչվել և պաշտպանվել իրավունքները, ազատություններն ու սուբյեկտության տարբեր ձևերը:

Այսօր մեր մոտեցումը գիտակցաբար հեռանում է այս ժառանգությունից: Այն հիմնված է ոչ թե վերահսկողության և շահագործման, այլ իրավունքների, պաշտպանության ու խնամքի լեզվի, ոչ թե սուբյեկտության տարբեր ձևերի ստորադասման, այլ դրանց ճանաչման, ինչպես նաև մշակույթն ու շրջակա միջավայրը որպես տարածքներ ընկալելու վրա, որտեղ կարող են ձևավորվել և իրացվել ժողովրդավարական արժեքները: Այս իմաստով բնության իրավունքների քննարկումը մեզ համար վերացական կամ մեզանից հեռու տեսական բանավեճ չէ: Այն ուղղակիորեն կապված է մեր հասարակությունների ավելի լայն ժողովրդավարական վերափոխման և մարդկանց, մշակույթի ու բնական աշխարհի միջև հարաբերությունները վերահիմաստավորելու անհրաժեշտության հետ:

Սա մեզ բերում է նաև ժողովրդավարությա՛ն հարցին: Ժողովրդավարությունը չի սահմանափակվում քաղաքական ինստիտուտներով, ընտրություններով կամ ֆորմալ ներկայացվածությամբ. այն վերաբերում է նաև նրան,

թե ով է ճանաչվում որպես սուբյեկտ, ում գիտելիքն է համարվում լեգիտիմ, ում ձայնն է լսելի, և ով իրավունք ունի մասնակցելու ընդհանուր տարածքներին, ռեսուրսներին ու միջավայրերին վերաբերող որոշումների կայացմանը: Այս տեսանկյունից՝ կայունությունը չի կարող հանգեցնել միայն բնապահպանական պատասխանատվության կամ բնական ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման: Այն վերաբերում է նաև այն հարաբերություններին, որոնց միջոցով հասարակություններն արտադրում են գիտելիք, կազմակերպում տարածքը, բաշխում ռեսուրսները և որոշում, թե ինչն ու ով է արժանի ճանաչման ու պաշտպանության:

Հենց այստեղ է մշակույթը դառնում առանցքային: Մշակույթը ձևավորում է այն եղանակները, որոնցով պատկերացնում ենք բնությունը, հիշում լանդշաֆտները, ներկայացնում բնապահպանական փոփոխությունները և ըմբռնում մեր պատասխանատվությունն այն վայրերի ու կյանքի ձևերի նկատմամբ, որոնց հետ կիսում ենք աշխարհը: Արվեստային և մշակութային պրակտիկաները կարող են տեսանելի դարձնել այնպիսի հարաբերություններ, որոնք դժվար է որսալ ավանդական հետազոտական մեթոդներով՝ միաժամանակ հանդիպման հնարավորություն ստեղծելով գիտելիքի այն ձևերի միջև, որոնք սովորաբար տարանջատված են ինստիտուցիոնալ և գիտակարգային սահմաններով: Այս իմաստով մշակույթը կարող է դառնալ մի տարածք, որտեղ հնարավոր է ոչ միայն մտորել բնապահպանական փոխակերպումների շուրջ, այլև պատկերացնել և ձևավորել նոր հարաբերություններ մեր շրջակա միջավայրի հետ:

Սույն հետազոտությունը բխում է հենց վերոբերյալ ընկալումից և շարունակում է այն աշխատանքը, որը CSN Lab-ը զարգացնում է 2018 թվականից: Սույն հրատարակությունը, որը նախաձեռնել է ՅՈՒՆԻՔ Հայաստանը, միավորում է տարբեր տեսանկյուններ, պրակտիկաներ և գիտելիքի ձևեր՝ Հայաստանում մշակույթի և շրջակա միջավայրի փոխհարաբերության շուրջ՝ չփորձելով այդ հարաբերությունը հանգեցնել կայունության մեկ միասնական սահմանման կամ սահմանել մեկ գիտակարգային շրջանակ, որի միջոցով այն պետք է ընկալվի:

Մեզ համար սա ոչ թե նախորդ աշխատանքից շեղում է, այլ դրա շարունակությունը: Եթե մեր նախորդ նախագծերն ուսումնասիրում էին, թե ինչպես կարող են հիշողությունը, մշակույթը և հանրային տարածքը նպաստել ավելի ժողովրդավար հասարակությունների ձևավորմանը, ապա շրջակա միջավայրի հետ մեր աշխատանքն այս հարցը մեկ քայլ առաջ է մղում՝ հարցադրելով, թե ինչպես կարող ենք վերահիմաստավորել ոչ միայն մարդկանց միջև հարաբերությունները, այլև մարդկանց ու նրանց կենսամիջավայրերի փոխհարաբերությունը: Ի վերջո, սա հարց է այն մասին, թե ինչպես ենք վերահսկողության մշակույթից անցնում հոգատարության և պաշտպանության մշակույթի, մասնատված գիտելիքից՝ փորձագիտական գիտելիքի տարբեր ձևերի միջև երկխոսության, իսկ մեզ ժառանգված հիերարխիաներից՝ մեր ընդհանուր աշխարհի առավել ժողովրդավարական ընկալման:

Հենց այս ելակետից էլ անցնում ենք դեպի «կանաչ Հայաստան. դեպի մշակութային կայունություն»:

Տիգրան Ավիրյան,
Մշակութային և սոցիալական նարատիվների
լաբորատորիայի (CSN Lab) նախագահ և հիմնադիր



ISBN 978-9939-1-2378-3

